



8(701)

2024

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

ԼՍՏԱՐԱՐ

Ճանաչել զիմաստությունն եւ գիրապ, իմանալ զբանս հանճարոյ

Лусарар

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ԴԱՐԵՐՈՒՄ ԳՈՅԱՏԵՎԵԼ ԵՆ ՆՈՒՅՆ ԼԵՉՎՈՎ ՈՒ ԱՅԲՈՒԲԵՆՈՎ

Երբ Մեսրոպ Մաշտոցն ավելի քան 1600 տարի առաջ Ամարատում հիմնում էր առաջին դպրոցը, նա հավանաբար Մեծ Հայքի 10-րդ մահաճում գիտելիքի ներուժը դիտարկում էր տիեզերական ժամանակի մեջ, քանի որ գիրն ինքնին անպարփակելի ուժ է, որից ճիշտ օգտվողը ոչ միայն դառնում է ապրած ժամանակի իրական տերը, այլև կարողանում է տիեզերքի իր հատվածում վստահաբար աճեցնել ապագայի ծիլերը:

Ավա՛ղ, այսօր Մաշտոցյան Ամարատը գտնվում է թշնամական գերության մեջ: Եվ ոչ միայն Ամարասի, այլև Արցախի աշխարհի բոլոր կրթօջախների զանգերը համրորեն լռել են: Անսովոր ու չարագուշակ է այդ լռությունը: Ընդամենը մեկ տարի առաջ խուլ շրջափակման մեջ գտնվող Արցախի Հանրապետության դպրատներում, ի բացառյալ բռնազավթված շրջանների կրթարանների, ուրախ դողանքում էր դպրոցական զանգը: Այնտեղ կար մանկանց ուրախ կանչ, լավատեսություն կար ու ափակոծ ոգևորություն: Միանգամից, մի քանի օրվա ընթացքում մասնատվեց այդ ոգևորությունը, բզիկբզիկ եղավ և սփռվեց աշխարհով մեկ:

Թե՛ Հայաստանում և թե՛ ՀՀ սահմաններից դուրս նոր ուսումնական տարվա զանգն արցախցի դպրոցականների համար կինչի Արցախի Հանրապետության օրհներգի հնչյուններով: Մի քիչ շիվար, մի քիչ տրտմած արցախաբարբառ աշակերտները հարազատ դեմքեր կփնտրեն իրենց նոր տունը դարձած կրթօջախի կամարների տակ: Հետո ամեն ինչ աստիճանաբար կշղարշվի կարոտի մշուշներով, ինչպես անցած մեկ տարվա ընթացքում, ու կնմա դարձյալ վերադարձի հույսը՝ որպես ոգու ամենահուսալի հենարան:

...Հայաստանի Հանրապետության շատ դպրոցներում այսօր բռնատեղահանված արցախցի երեխաներ կան, որոնք արդեն հարազատորեն են վերաբերվում իրենց տարեկիցներին, ունեն իրենց սիրած ուսուցիչները, մտերիմ ընկեր-ընկերուհիները: Մեծն Մաշտոցն է պատգամել. «Ճանաչել զիմաստությունն եւ գիրատ, իմանալ զբանս հանճարոյ...», և նրանք իրենց դասընկերների հետ միասին հավատարիմ կլինեն մաշտոցյան սուրբ պատգամին: Նաև կհավատան, որ ոչ հեռու ապագայում կվերադառնան հայրենի Արցախ, որտեղ կշարունակեն կրթությունը ծննդավայրի դպրոցներում՝ պահպանելով ջերմ սերն իրենց ապաստան տված Մայր հայրենիքի հանդեպ: Նույն լեզվով ու այբուբենով են միասին գոյատևել դարերում, այդ ամուր կապով էլ հավերժ կգոյատևեն: Չկասկածնք:

Բարի՛ մեկնարկ նոր ուսումնականին:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՍԵՊՏԵՄԲԵՐԵՐԿՈՒՄՅԱՆ ԱՆՓՈՓՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴ



Սեպտեմբերի 2-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման օրն է: Ավելի քան երեք տասնամյակ մենք այն ընկալել ենք որպես Արցախի պետականության գլխավոր տոն, թեպետ կապված Արցախյան շարժման հետ՝ հիշարժան այլ օրեր էլ ունենք: Դրանց շարքում են փետրվարի 20-ը՝ ի նշանավորումն 1988-ի փետրվարի 20-ի ԼՂԻՄ մարզխորհրդի պատմական որոշման, այնուհետև 1989թ. դեկտեմբերի 1-ի՝ վերամիավորման մասին ՀԽՍՀ Գերա-

զույն խորհրդի և ԼՂ Ազգային խորհրդի համատեղ որոշումը, հետագայում՝ 1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեն, որտեղ Արցախի ժողովուրդը միաձայն քվեարկեց իր անկախության օգտին, իսկ ամենավերջում՝ 1992թ. հունվարի 8-ին, պետական անկախության հռչակումը ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի նիստում:

Հիշյալ տոների մեջ ո՞րն էր միջազգային իրավունքի տեսանկյունից ավելի ճիշտ, որով կարելի էր անխտոր առաջնորդվել ու հասնել ցանկալի արդյունքի: Փաստն այն է, որ վերոհիշյալ տարեթվերը շարունակում են ապրել մեր հույզերի մեջ, սակայն բուն սուբյեկտը՝ Արցախի Հանրապետությունը, ցավալիորեն չկա. մենք իրականությանը պետք է նայենք այն գույներով, որպիսին դրանք կան, «գունավոր ակնոցներ» մեզ պետք չեն:

Ի՞նչն ենք սխալ արել, որ լիարժեք կայացած, պետական ինստիտուտներով ձևավորված

երկիրը դադարել է գոյություն ունենալուց: Իհարկե, պատճառները ենթադրելի են, սակայն ինչպես անցած տասնամյակներին, մենք դարձյալ փորձում ենք սխալները փնտրել այլոց մեջ: Մեզանից ոչ ոք չի ուզում տեսնել սեփական վրիպումները և այն անհմաստ հանդուրժողականությունը, որ երբևէ դրսևորում էինք իշխանության ներկայացուցիչների խտորնակ գործողությունների նկատմամբ:

... Երբեմն համեմատություններ են արվում, մասնավորապես, ԼՂՀ-ն համեմատելով Կիլիկիայի, Ստեփանակերտը՝ Կարսի հետ: Եթե կա որոշակի ընդհանրություն, դա թերևս հայկական պարզամտությունն է, որն օգտագործելով՝ ֆրանսիացիները՝ Կիլիկիան, իսկ բուլղարները՝ Կարսը թողեցին շան բերանում ու հեռացան: Իսկ 2023-ի մեղավորը նաև ինքներս ենք, որովհետև մինչ այդ պաշտպանված լինելով հայկական զինուժի անվիճարկելի մարտունակությամբ՝ ապավինեցինք օտարին և

հայտնվեցինք անդունդի եզրին: Կարո՞ղ ենք այս ամենից հետևություններ անել, որպեսզի խուսափենք հետագա ճակատագրական սխալներից: Անշուշտ, կարող ենք, եթե չչարունակենք կաղապարվել հին պատկերացումների մեջ: Ժամանակը նոր մարտահրավերներ ու մարտավարություն է առաջադրում, հարկավոր է դրանք ճանաչել ու ճիշտ ռազմավարություն մշակել: Իսկ դրա առաջին քայլը հայկական հողի վրա կառնած մնալն է: Այստեղ Հայաստանն է՝ մեր երազ-երկիրը, որի պաշտպանությունն ու բարգավաճումը ամեն մեկիս սրբազան պարտքն է: Իսկ ռեկոնկիստա՝ հետնվաճում, անպայման կլինի, և դրան մեզ կառաջնորդի սեպտեմբերյան անփոփոխ խորհուրդը:

Կեցցեն Հայաստանն ու Արցախը: Ընդհանուր բոլորիս տոնը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՆՈՐ ՄԵԿՆԱՐԿ



ԲԱՐԵՄԱՂԹՈՒՄ ԵՆ ԱՐՅԱՆՅՈՒ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԸ

Ընդհանուր նոր ուսումնականի մեկնարկը, աշխարհասփյուռ արցախահայ սերունդ, հայ սերունդ, գիտցե՛ք՝ հասարակության մակարդակը բարձրացնելու միակ ճանապարհը կրթությունն է, ու այն երկիրը, որը չի գնահատում գիտության արժեքը ու չի զարգացնում այն, անխուսափելիորեն վերածվում է գաղութի: Կրթությունը մարդուն

տալիս է արժանապատվություն, նույնիսկ ստրուկն է սկսում գիտակցել, որ ինքը ծնված չէ ստրուկ լինելու համար:

Բավ է կորցնենք ու ողբանք... Բավ է ստրուկ լինենք թուրք գիշտաչին թեկուզ մտովի, գաղափարներով...

Զինվե՛ք գիտելիքներով ու կերտե՛ք լուսավոր ապագա:

Սուսաննա ՄԿՐՏՉՅԱՆ

... Միամի՞տ էինք, թո՞ւյլ, թե՞ բավականաչափ զրագետ չէինք, որ հասկանայինք՝ ինչը ինչի կարող է հանգեցնել: Ախր սխալներ կան, որոնց հետևանքը, ցավոք, հայրենիքի, պետության կորուստն է լինում:

Նոր, ուժեղ սերունդը գուցե

կարողանա գերծ լինել նախորդների սխալներից: Դրա համար մեզ ժամանակակից աշխարհի օրենքները ճանաչող, ազգային արժեքների կրող, արժանապատիվ սերունդ դաստիարակող կրթական համակարգ է հարկավոր:

Դարձյալ հուսանք ...

Ամալյա ՎԱՆՅԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Զաքար ՔեչիճՅԱՆ. ԿՄԱՂԹԵՄ, ՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԶՆՈՒՍԱԼՔՎԻ, ԶՇԻԱՍԹԱՓՎԻ, ՈՐՈՎՆԵՏԵՎ ՈՐՏԵՂ ԿԱՄՔ ԿԱ, ԱՅՆՏԵՂ ԱՆՊԱՅՄԱՆ ՀԱՂԹԱՆԱԿ ԿԱ

Շուշիի «Վարանդա» երգ-չախմբի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար լիբանանահայ Զաքար Քեչիճյանը մոտ երկու ամիս է, ինչ երևանում է՝ շարունակելու համար ավելի քան 32 տարի առաջ Շուշիում սկսած առաքելությունը: Մեր հարցազրույցը Զաքար ՔեչիճՅԱՆի հետ, որը կայացել է Գոմիում գտնվող Թուրքիայի Բազմազգային կենտրոնում:

- Մի տեսակ անսովոր է ու ոչ բնական. Զաքար Քեչիճյանը հերթական անգամ գալիս է Հայաստան ու Շուշի չի կարողանում զնայ: Եվ այդպես՝ 2020 թվականի աշնանային պատերազմից հետո: Դա Ձեզ թևաթափ չի՞ անում:

- Եթե թևաթափ պիտի արվեր, ոչ էս պիտի գայի, ոչ այս հարցազրույցը ունենայի և ոչ էլ «Լուսարար»-ը պիտի պահպանվեր այստեղ որպես վտարանդի թերթ: Մեզ շատ պատահած է, որ կորցրել ենք մեր հայրենիքի մասեր, սակայն մեր մեջ չենք կորցրել դա: Հայրենիքը նախ մարդու մեջ է՝ ինքն ու իր հայրենիքը: Եվ այնքան ժամանակ, որ ինքը իր մեջ կրում է հայրենական արժեքներ, հույսը, հավատը, նվիրումը, սերը, պայքարելու ոգին իր մեջ չեն կտրվում՝ վերստին ազատագրելու համար այն հատվածը, որ ապօրինաբար զավթվել է իրենից: Ինչպես Մուշը, Վանը, Սասունը, Մուսա լեռը մենք սրտի, հոգու մտքի մեջ չենք հանձնել թշնամուն, այնպես էլ Արցախը պետք չէ հանձնենք: Եթե չհանձնենք մեր մեջ, ուրեմն կորած չի: Իսկ եթե մեր մեջ կորցնենք այն և հուսալքվենք, հիասթափվենք և դառնանք աշխարհաքաղաքացի, որը մեծ վտանգ կա այդպես լինելու, և հավանականությունն էլ շատ մեծ է, այդ պարագային մենք իսկապես կկորցնենք, և այդ ժամանակ ոչ թե դժվար, այլ անհնարին կլինի ինձ համար հարմարվելը: Չհուսալքվելու, չբարոյագրվելու, նաև իմ տեսակների հետ այդ աշխատանքը կատարելու հավատքով եմ եկել:

- Դժվար չէ՞ր ցարցուցրիվ եղած արցախցի շնորհալի երեխաներից նորից երգչախումբ ձևավորել:

- Դժվարը երեխաներին հավաքագրելն էր: Ափսոս, Գորիսից մինչև Գյումրի սաները ցրված են: Հնարավոր եղավ 73 երեխա հավաքագրել: Դժվար էր նաև առաջին հանդիպումը, երբ ես ուզում էի գնալ, բայց կարծես ոտքերս չէին գնում, երգի նման՝ «Կանգնել եմ, գալ չեմ կարող, լցվել եմ, լալ չեմ կարող»: Այդ վիճակն էր, թե ինչ պիտի ասեի երեխաներին, ինչպես պիտի ասեի, ինչպես պիտի սկսեի: Այդ մտորումներում էի, սակայն երբ հասանք, փաթաթվեցինք իրար, արդեն սկսեցինք կատակներով, ինքնաբերաբար բնա-

կան հունով ընթացավ աշխատանքը: Այս նախաձեռնության առիթը երեխաները տվին: Ինձ գրում էին՝ պարոն, երևան գալու՞ եք այս ամառ: Ես հայտարարություն տվեցի իմ ֆեյսբուքյան էջում՝ իմանալու, թե ով որտեղ է, տեսա, որ մեծ մասը Մասիսում, Արվյանում, Երևանում են: Այդ օրերին էլ ես Ամերիկայում էի, և այնտեղի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Կիլիկյան թեմի Արևելյան Ամերիկայի առաջնոր-



դը՝ Անուշավան արքեպիսկոպոս Դանիելյանը, ինձ ասաց. «Վարանդա»-ն ի՞նչ պիտի անես հիմա»: Ասացի՝ հայտարարություն եմ տվել: Ասաց՝ տեսա հայտարարությունը դրա համար եմ հարցնում: Ասացի սերտում եմ, եթե գոնե մի 40-50 երեխա լինի, պիտի գնամ, եթե ձեռք գտնեմ: Ասաց, այդ պարագային այս տարվա համերգները մենք կհովանավորենք՝ Առաջնորդարանը: Անշուշտ, ամբողջությամբ չէր հերիքի, մի քանի մտերմագույն բարեկամներ, ընկերներ իրենք էլ օգնության ձեռք մեկնեցին և իրագործելի դարձավ այս ծրագիրը: Այս ամառ ես ունեմ երկու մայր ելույթներ. մեկը շվեդ-դուդու-դաշնամուր ելույթն է, որ այս անգամ ևս տիկնոջ՝ Կամիլայի հետ պետք է տայի, սակայն նա այս տարի չկարողացավ գալ, և հետևաբար մեծ սիրով կատարում եմ Արցախի լավագույն դաշնակահարուհիներից և «Վարանդա»-ի դաշնակահար տիկին Նադեժդա Հակոբյանի հետ: «Միասնական» խորագիրն ունի: Նպատակս է Արցախի և Երևանի մտավորականներին, որոնց հետ կարճ ժամանակ այստեղ լինելու համար շատ հաճախ բոլորին տեսնելու առիթ չի լինում, մի համերգով բոլորին խմբել, համերգ տալ, հետո միասին քիչ մը զրուցել, զիրար տեսնել: Իսկ երգչախմբի համերգը պետք է տեղի ունենա կամերային երաժշտության տանը սեպտեմբերի 13-ին: Սակայն նաև ծրագրվում է մոտակա քաղաքներում ևս ելույթներ ունենալ, տեսնենք՝ թե երբ և որտեղ:

- Արցախի կորուստը, բռնազաղթը թեմատիկ առումով ազդե՞լ են երգացանկն ընտրելիս, եթե համեմատում ենք 10-20 տարի առաջվա «Վարանդա»-ի հետ:

- Հայոց ցեղասպանությունից հետո Մարտիրոս Սարյանը ողբերգական, պաթետիկ պատկերներ նկարելու փոխարեն ծաղիկներ նկարեց: Դա ինձ համար օրինակելի վարքագիծ էր: Անշուշտ, հայրենասիրական հողումը կա երգացանկում, բայց ոչ՝ ամբողջական, այլ արվեստի որակյալ երգերով: Իսկ բնականաբար Մարյանի ծաղիկների պես երգացանկում գերակշռող մասը կատակն է:

- Գոմիում անցավ մեր հայրենիքի համար, որը միշտ էլ եղել է «Վարանդա»-ի գործունեությունը լուսաբանող տեղեկատվական հարթակներից մեկը, սրտատրոսի սպասում է այդ օրվան:

- Երգչախմբի սաներից շատերն արդեն հասուն տարիքի են: Ի վերջո, երեք տասնամյակից ավելի ժամանակ է, ինչ այն գործում է: Նախկին սաների հետ կապեր պահո՞ւմ եք:

- Բարեբախտաբար համացանցի այս դարում դա հեշտացել է: Առաջին տասնամյակում, քսանամյակում թերևս բավական դժվար էր, որովհետև նամակագրական կապ էր, նաև ես հիշում եմ, որ Լիբանանից Արցախ մի ճամպուրակ նամակներ էի բերում-տանում: Լիբանանի իմ «Կարկաչ» երգչախումբը և «Վարանդա»-ն քույր երգչախմբեր էին, և նամակագրական էր կապը: Հիմա շատ ավելի հեշտացել է, որովհետև մարդիկ կարող են հաղորդակցվել հեռակա: Իսկ կապը պահպանվում է: Յոթ-ութ հարյուր սաներ են անցել մինչև հիմա, բոլորի հետ մշտական կապ ունեմ: Եվ պահել, անշուշտ, սակայն որոնք երկար ժամանակ են երգել, և որոնք հավատարմություն են զգում երգչախմբի նկատմամբ, նրանց բոլորի հետ կապերը կան, և այդ կապերը շատ ջերմ են, զեղեցիկ: Եվ ոչ միայն «Վարանդա»-ի, Լիբանանի իմ «Կարկաչ», «Այգ», «Կաքավիկ», «Ծիածան»՝ այժմ և նախկին երգչախմբերի սաների հետ, որոնց թիվը երկու հազարը կանցնի և որոնք աշխարհով մեկ սփռված են: Ինձ համար մեծ ուրախություն է նրանցից որևէ մեկին շատ հաճախ, գրեթե ամեն օր տեսնելը: Իսկ վերջերս, որպես Համազգայինի կենտրոնական վարչության նախագահ, Համազգայինի 95-ամյակի առիթով շրջագայեցի Կանադայում, Ամերիկայում, Քուվեյթում, Կիպրոսում, ամեն տեղ հանդիպեցի և Արցախի, և լիբանանահայ իմ սաներին, որոնք արդեն

ընտանիքներ են կազմել, սակայն շատ ջերմությամբ եկան ինձ ողջունելու: Շատ ջերմ հարաբերություններ են: Այդ զգացողությունը մեծ հարստություն է ինձ համար, իմ գլխավոր հարստություններից մեկը, որն աննյութեղ է, և ինչքան էլ փող ունենա մեկը, այդ զգացումը չի կարող զնել:

- Հուսանք, մեր հաջորդ հանդիպումը տեղի կունենա վերստին ազատագրված Շուշիում: Համեմայն դեպս, «Լուսարար» թերթը, որը միշտ էլ եղել է «Վարանդա»-ի գործունեությունը լուսաբանող տեղեկատվական հարթակներից մեկը, սրտատրոսի սպասում է այդ օրվան:

- Շնորհակալ եմք, նաև այս գրույցի համար, ուրախ եմ, որ «Լուսարար»-ը շարունակում է իր առաքելությունը: Կարևոր թերթ էր Արցախի մեջ, կրթամշակութային համակարգը լուսաբանող և այնտեղի ուսուցիչների մասնագիտական հոդվածները՝ կրթական, մեթոդական, աչքի ընկած են ինձ համար: Երբ Արցախում էի, առիթ եմ ունեցել թերթելու, ուրախ եմ, որ շարունակում է այդ առաքելությունը:

- Տասնամյակներ շարունակ կապված լինելով Արցախի հետ՝ բավականին լավ յուրացրել եք արցախյան բարբառը: Ի՞նչ կնադրեք արցախահայությանը նրա իսկ բարբառով:

- Ազերիների լծի տակ բարբառն էր, որ պահեց այս ժողովուրդը: Բարբառը մեծ արժեք է, առանց բարբառի կարող էինք ինքնության տեսակի պակասորդ ունենալ: Ես ինքս մուսալեռացի եմ, և Մուսա լեռան բարբառը գիտեմ, և դա նպաստեց, որ բարբառը շուտ սովորեմ երկի: Եվ ահագին նմանություններ կան Արցախի և Մուսա լեռան բարբառների միջև որոնք որ գրաբարից են գալիս: Ես սովորեցի ոչ շատ լավ, բայց ամբողջությամբ հասկանալով, մի քիչ էլ ակցենտով խոսելը:

Կմաղթեմ, որ ժողովուրդը չհուսալքվի, չհիասթափվի, որովհետև որտեղ կամք կա, այնտեղ անպայման հաղթանակ կա: Դժվար հանգրվան է, ես գիտեմ կենցաղային և հոգեբանական այդ դժվարությունները: Նպատակս էլ դա է՝ երգի ճամփով երեխեքի հոգու խոցը մեղմել մի քիչ, ինչքան որ կարող եմ: Ուժ, կարողություն, իր տեսակը չկորցնելու վճռականությունն են մաղթում Արցախի իմ քույրերին և եղբայրներին:

Հի՞նչ ասիմ, մաղթում եմ Արցախի ժողովրդին, որոնց մասին միշտ ըսելիս ըն իլալ կոռ ճղուպուր, պահի այդ հատկանիշը, իր տեսակը, բարբառը, որը մեծագույն հարստություն է:

Հարցազրույց՝ Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

ՀԱՄԵՐԳ՝ ՀԱՄԵՄՎԱԾ ՀԵՏԱՔՐՔԻՐ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՎ

«Միասնական» խորագրով համերգը, որը տեղի ունեցավ օգոստոսի 28-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում, Զաքար Քեչիճյանի՝ արցախցիներին համախմբող առաջին միջոցառումն էր Արցախից դուրս:

Համերգը ներառում էր շվեդ-դուդու-դաշնամուր: Ծրագիրը, ինչպես միշտ, նպատակային էր: Յուրաքանչյուր համար երախտագիտության տուրք էր նշանավոր երաժիշտների հիշատակին: Համերգը Մեծն Կոմիտասի «տանն» էր և այն մեկնարկեց Գրիգոր Եղիազարյանի «Սևան» բալետից մի հատվածով, որը Կոմիտասի «Շողեր ջան» երգի մոտիվներով է:

Հաջորդը, որը Առնո Բաբաջանյանի «Հորժամ» ստեղծագործությունն էր՝



«Տաղ մնջեցելոց» հոգևոր երգի մշակումը, նվիրվեց Արցախյան պատերազմի տարիներին վասն հայրենյաց զոհվածների հիշատակին: Մեկը Մավիսակալյանի, Արտեմ Խաչատուրի, Խաչատուր Ավետիսյանի, Գրիգոր Եղիազարյանի, Գրիգոր Հախիմյանի, Գևորգ Մանասյանի, Ռոբերտ Պետրոսյանի ստեղծագործությունների կատարումները համեմվում էին նրանց մասին հետաքրքիր հուշերով: Զ. Քեչիճյանը, որպես երախ-



տագետ սան, յուրաքանչյուր կատարում նվիրում էր իր ուսուցիչներին: Երջանկա-հիշատակ կոմպոզիտոր Ռ. Պետրոսյանի ծննդյան տարեդարձն էր այդ օրը. նա կդառնար 94 տարեկան, իր գործերով շարունակում է ապրել: Հատուկ իր համար գրված կոմպոզիտորի ստեղծագործության պրեմիերան Զ. Քեչիճյանը ներկայացրել էր դիպլոմային քննության ժամանակ և կատարեց նաև համերգին:

Ներկաները ծափողջուներով ողջունեցին Ռուբեն Ռուշանյանի ներկայությունը, որը շվեդ պատրաստող լավագույն վարպետն է Հայաստանում:

Համերգը՝ համեմված հանդիսականների տրամադրությունը բարձրացնող գրույցներով, ավարտվեց «Բերդ պար»-ով:

Որպես հավելում մշենք, որ արցախցիներին մեծ մասն առաջին անգամ էր լինում Կոմիտասի թանգարան-ինստիտուտում և հիացած ենք նրա ծարսարայետական լուծումով: Իսկ երգահանի կիսանդրին, որ տեղադրված է հանդիսատեսների շարքի ծայրին, այն տպավորությունն է ստեղծում, որ նա խորապես ապրում է բեմից կատարվող երաժշտությունը:

Սվե. լրատվություն

ՏԵՂԻ ՆԿԱՐԱԳԻՐ

«ՍԱՍՈՒՆԳԻ ԴՎՎԻՔ» ԴՈՆՏԻ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհի առջև: **Յուր. Թումանյան**

Երևանի Յուր. Թումանյանի թանգարանը կրկին իր կամարների տակ էր համախմբել գրականության ու մշակույթի ներկայացուցիչների, հոգեբանների, թումանյանասերների: Քննարկման նյութն էր՝ Յուր. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմը. ինքնություն, արժեքներ:

Թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը ամեն անգամ փորձում է նոր լույսի տակ բացահայտել Յուր. Թումանյանի մեծությունը, նրա հանճարեղ գաղափարները, որոնք թվում է, թե հազար անգամ լսել ու կարդացել ենք, ծանոթ ենք վաղուց, սակայն ամեն անգամ դրանք նոր գույն ու երանգ են ստանում նրբորեն վերլուծությունների ու բացահայտումների շնորհիվ:

Գլխավոր բանախոսը՝ բանասեր, բանասիրական գիտությունների թեկնածու, էպոսագետ Հայկ Համբարձումյանը, ներկայացրեց մեր ազգային դյուցազներգության՝ «Սասնա ծռեր»-ի ուղերձները, որ բոլոր դարերի համար մնում են միշտ արդիական: Բոլոր ժամանակների համար էպոսը շարունակում է մնալ մարդկային անհերքելի արժեքների բացահայտման անսպառ աղբյուր: Հայկ Համբարձումյանը՝ որպես ուսումնասիրող, անդրադարձավ այն հատկանիշներին, որի կրողը մեր ժողովուրդն է ու նրա սիրելի հերոսը՝ Սասունցի Դավիթը:

Հայ ժողովրդի երախտավոր զավակ, բանահավաք Գարեգին Սրվաճյանյանը, տարոնցի երեսփոխան Կրպոյից գրի է առել և 1874-ին հրատարակել «Սասունցի Դավիթ կամ Մեծի դուռ» վերնագրով էպոսի պատմությունը մեկը:

Օրվա միջոցառումը նվիրված էր այդ պատմության հրատարակության 150-ամյակին:

Էպոսի գլխավոր ուղերձը եղել ու մնում է այն, որ պետք է լավ պահպանել ազգային ավանդույթները, ճանաչել մեր ժողովրդին, պահպանել ու պաշտպանել մեր սրբությունները: Էպոսի գլխավոր հերոսները մարմնավորում են մեր ժողովրդի լավագույն իդեալները, սիրելի ու պաշտպանել այն հողն ու ջուրը, որ քո հայրենիքն է և խորհրդանշում: Օրինակ՝ Դավիթը մարտից առաջ հրաժեշտ է տալիս ոչ միայն Սասնա մայրերին ու քույրերին, հարևաններին, այլև Ծովասարին, զով հովերին...: Սրանով հերոսներն իրենց վերաբերմունքն են արտահայտում հայրենիքի հանդեպ: Այդ արժեքները գնահատելու ու վերաբժանելու պատգամն է՝ ուղղված մեր հետագա սերունդներին:

Էպոսը ոգեշնչել է ոչ միայն գրականության, այլև մշակույթի գործիչներին, օրինակ՝ Երվանդ Քաչարի հրաշալի հուշարձանը՝ Սասունցի Դավիթը, Երևանում: Թումանյանի մշակույթը էպոսն ավելի է սիրելի դառնում ընթերցողների համար: Մեծ գրողն ավելի հզոր ծրագրեր ուներ էպոսի մշակման գործում, ցավոք, չհասցրեց:

Դյուցազնապատմության շատ կարևոր ուղերձներից է հայ եկեղեցու, անխախտ հավատի պահպանությունը: Հիշենք, թե ինչպես է Դավիթը վերականգնում Մարութա Սբ. Աստվածածին վանքը, Ծովասարը, որն իր նախնիների որսասարն է եղել:

Սա պետականամետ մարդու մտածողություն է: Մեր հերոսները պաշտամունքային վերաբերմունք ունեն հայրենիքի հանդեպ, նրա բնության ու հարստության հանդեպ: Երբ Սարա հարկահանները փորձում էին «յոթը տարվա խարջը» տանել, ներս է ընկնում Դավիթը ու խորհուրդ կեցվածքով պահանջում. «Իմ հոր ոսկին է, ես եմ չափելու»: Իսկ երբ նրանք ընդդիմանում են, Դավիթը չափը շարտում է, Կոզբաղ-նի գլուխը ջարդում...:

Հետո տեսնում ենք՝ ինչպես է Սարա ժողովուրդը ծաղրում իր պոռոտախոս հարկահաններին՝ ասելով.

- Է՛յ, Կոզբաղին մեծաբերան,
Փացիր Սասուն քանց գել-գազան,
Վերադարձիր քանց շուն վազան...
Ամեն անգամ էպոսն ընթերցելիս ու այդ ար-

ժեքներին առնչվելիս մարդ ավելի մեծ ու զորություն է ստանում:

Դավթի կերպարը միաժամանակ նաև մարդկային է ու ոչ ռոբոտային: Սարա Մելիքի բազմահազարանոց գործը տեսնելով՝ նա ևս սովորական մարդու պես սարսափ է ապրում:

Մեր էպիկական հերոսները լավ են տարբերակում թագավորներին և ժողովրդին: Նրանք համոզված են, որ պատերազմ հրահրողները թագավորներն են և ոչ ժողովուրդը, հետևաբար պատերազմի ժամանակ մենամարտի է գնում՝ խնայելով ժողովրդին: Արաք ծերունու իմաստուն խոսքին ունկնդիր՝ Դավիթը մենամարտում է զլխավոր թշնամու՝ Սարա Մելիքի դեմ, հաղթում նրան ազնիվ մարտում և կոչ անում Սարա գորբին այլևս վերադառնալ իրենց տները. «Իսկ թե մեկ էլ գեներ ու գոռով Վեր եք կացել դուք մեզ վրա, Հորում լինի քառսուն գազ խոր, Թե ջաղացի քարի տակին, Կել-նի ձեր դեմ Սասնա Դավիթ, Կելնի ձեր դեմ Թուր Կեծակին»:

Մենք երբեք նվաճողական պատերազմներ չենք մղել, եղել ենք հաշտ ժողովուրդ, բայց երբեք չենք հանդուրժել օտարի լուծը: Հենց այս հանգամանքը նկատի ունեն մեր հերոսները, երբ ասում են, թե Սարա Մելիքի երկիրը Մարն է, թող այնտեղ մնա, ի՞նչ գործ ունի Սասնա հողում:



Էպոսի ուղերձներից մեկն էլ այն է, որ մենք երբեք բարոյական նորմերով չենք հավասարվել մեր թշնամուն, այլ եղել ենք միշտ ազնիվ ու վեհամոտ: Մեր պատմությունը հարուստ է բազմաթիվ օրինակներով (Մուշեղ Մամիկոնյանը Պարսից կամանոցը անվաճա ու պատվով վերադարձնում է Շապուհին, Դավիթը սրով չի զարկում Մելիքի կնոջն ու քրոջը և այլն):

Յուր. Թումանյանն էպոսը մշակելիս հավատարիմ է մնացել ժողովրդական բանահյուսության ժառանգությանը: Ու հասկանալով, որ ինքնության գաղափարը նոր էր ծնվելով մեր մտավորականության մեջ, փորձում էր երեխաներին մատուցել իր պարզ ու զուլալ լեզվով գրվածքը, որն անսահման հայրենասիրական մղումներ ունի: Ծրագրում էր հետագայում մեծերի համար մշակումներ անել, ստեղծել Յուր. Թումանյանի պոեմների համարժեք գրական հուշարձան, ցավոք, չստացվեց: Ողջ կյանքում նա զբաղվել է էպոսի մշակման հարցերով: Հերոսների բարեպաշտությունը, ընտանիքի հանդեպ ջերմ ու հոգատար վերաբերմունքը, խաղաղասիրությունը, մեր հոգևոր արժեքների հանդեպ զգայուն ուշադրությունը, մի խոսքով՝ քաղաքակրթական բոլոր նորմերը նրա կենցաղավարության անբաժանելի մասն են կազմել:

Պոեմը պատկերացում է տալիս հայրենիքի ու հայ ոգու միասնականության մասին:

Երկրորդ բանախոսը՝ Լուսինե Ղարախանյանը, փորձառու հոգեբանի մանրակրկիտ վերլուծությամբ մեզ մատուցեց ոչ վաղ անցյալում Մոսկվայի «Գեղարվեստական գրականություն» հրատարակչությանը լույս ընծայված «Աստղային ողկույզ: Աղբյուրների բանահյուսությունը և գրական հուշարձանները» ժողովածուն, որում արտացոլված ստեղծագործությունների բովանդակությունը ոչ միայն հակագիտական է ու չփաստարկված, այլև ունի պարզապես երանգներ: Առհասարակ ժողովրդական գրականության մեջ, մասնավորապես

էպոսում, վեհացվում են ոչ միայն ազգը, այլև առանձին անհատները: Օրինակ՝ «Դեղե Քյորքյուք» կամ «Քյորքյուք Աթա»-ի մասին էպոսում խոսվում է օղուզական ցեղերի վարած պատերազմների մասին: Փորձելով բացահայտել ազգային մշակույթի արմատները՝ թուրք գաղափարախոս Զիա Գեքալիլը անդրադառնում է օղուզական էպոսին, որը սոսկ օղուզ թուրքերի պատմությունը և էթնիկ իսկությունը բացահայտող նյութ չէ: Նա օղուզական էպոսը համարում է ազգային մշակույթ և առհասարակ մշակույթը դիտում որպես ազգային երևույթ, իսկ քաղաքակրթությունն ըստ այս «մեծ» գաղափարախոսի՝ միջազգային է, և թուրքական մշակույթը պետք է փրկել «միջազգային քաղաքակրթության ճիղերից»:

Օղուզ խանը, որ գիտության համար դեռ մութ կմնա:

Այն դեռ կապրի հարգված ու մեծ
Արյունիս մեջ:
Օղուզ խան...
Կներշնչի սիրտս մա
Թուրքիան չէ հայրենիքը թուրքերի,
Թուրքստանն է՝
Երկիրը մեծ,
Հավերժական
Թուրան...
Էպոսն ընդհանրապես մարդկանց ներշնչելու, նրանց համախմբելու առաքելություն ունի: Հարց է առաջանում. ինչպիսի՞ կերպար է մատուցվում երիտասարդ սերնդին:

Ինչևէ, օղուզը պաշտվում է իբրև ազգային դյուցազն ու նախահայր: Գլխավոր հերոսներից է Բայբուր Բեկը, որը շատ տարիներ զավակ չի ունեցել, և, ահա, երկար աղոթքներից հետո ալլա-հը արու գավակ է պարգևում, բայց նրան անուն չեն տալիս: Տղան անուն է ունենում միայն այն ժամանակ, երբ

գլուխ է կտրում և արյուն թափում: Եվ ահա Քյորքյուք պապն ասում է. «Բարձրյալ Աստված քեզ տվեց որդի, թող նա էլ պահպանի նրան: Նա բարձրանալու է մեր առջև փռված ծյունածածկ սև լեռը: Նա անցնելու է արյամբ տաքացած գետերով: Թող Աստված հեշտացմի նրա անցումը: Նա մխրձվելու է անհավատների խիտ ամբոխի մեջ, թող ամենաբարձրյալ Աստված պարգևի քո որդուն հաջողություն»:

Էպոսը շարունակում է թուրք-ազերիների վրա կատարել «նախնիների փառահեղ անցյալի» ներգործությունը: Ավելին, այն այսօր վարքային մոդել է նրանց բանակի համար: Էպոսի չորրորդ գլխում պատկերված է ճիխ խնձույթի տեսարան, որի ընթացքում նկարագրվում է Ղազան Բեկի մտահոգությունը. «Նայեցի աջ, տեսա եղբորս՝ Ղարա Գյունեին, նա կտրել է զուլխներ, հոսեցրել արյուն և հասել փառքի: Նայեցի ձախ, տեսա Արուզին: Նա կտրել է զուլխներ, հոսեցրել արյուն, հասել փառքի: Երբ նայեցի առաջ, տեսա քեզ, 16 տարի կարել էս, կգա օրը, ես կընկնեմ, կմահանամ, կմնաս դու, դու դեռ աղել չես լարել, արյուն չես թափել, օղուզների մեջ պարզվեցրել չես ստացել: Վաղը կփոխվի ժամանակը, ես կմեռնեմ- կմնաս դու, ավաղ, իմ թագը, իմ թագը քեզ չեն տան, այդպես մտածելով՝ ես հիշեցի իմ վերջի մասին, լացեցի»: Ի պատասխան հորը՝ որդին հանդիմանական տոնով հարցնում է. «Ե՞րբ ես դու ինձ քեզ հետ վերցրել ու տարել անհավատների (գյավուրների) սահմանի մոտ, հարվածել սրով, կտրել զուլխներ, որ ես տեսնեի ու սովորեի»: Ու հայրը խոստանում է որդուն տանել իր հետ հաջորդ արշավանքների ժամանակ:

Սա, իրոք, սերունդների սոցիալականացմանը նպաստող նորմի մատուցում է, որում խնամքով ներկայացված է խրախույսը. այն է՝ գլուխ կտրելուց հետո լիարժեք կյանքի իրավունքի վատարկումը: Սրան հակարեմբ մեր

դյուցազուն Դավթի հունամիզը մարտի գնալուց առաջ: Նա ոչ թե կացնահարում է քնածին, ինչպես դա եղավ Բուդայեշտում վերապատրաստում անցնող Գուրգեն Մարգարյանի հետ Ռամիլ Սաֆարովի կողմից և Քյարան Սլոյանի նկատմամբ քառօրյա պատերազմում, այլ արժանապատվորեն արթնացնում է քնից.

Ով քնած եք՝ արթուն կացե՛ք,
Ով արթուն եք՝ ելե՛ք, կեցե՛ք,
Ով կեցել եք՝ գեներ կապեցե՛ք...
Կամ՝
Քընել-մընել չեմ հասկանում,
Վե՛ր կացրեք շու՛տ, դուրս գա մեյդան,
Էնպես դրան ես քնեցնեմ,
Որ չգարթնի էլ հավիտյան:

Ոչ վաղ անցյալում Քյորքյուքի էպոսն նվիրվեց մեծ գիտաժողով, որը համարում ենք թուրք ազգի համընդհանրական գաղափարախոսության կենսականացում: Դեղե Քյորքյուքն իր հաստատուն տեղն ունի թուրքերի ազգային արժեքների համակարգում, քանի որ այն արդեն տարբեր թուրք գաղափարախոսների կողմից մշակված գաղափարախոսության մեջ է: Դեղե Քյորքյուքը՝ որպես դաստիարակության ու սոցիալականացման հզոր մեխանիզմ, շարունակում է առանցքային դեր խաղալ ազերական հանրության ներկայի կերտման մեջ:

Ի տարբերություն օղուզական էպոսի՝ մեր էպիկական հերոսներն օժտված են մարդկային ամենավեհ հատկանիշներով՝ անձնագոհությամբ՝ հանուն օջախի հարատևության (Մեծ Մեհր ու Արմաղան), ազատասիրությամբ, երբ փոքրիկ Դավիթը մոտ չեկավ դուշման Մելիքի թրին՝ հպատակվելու համար, արժանապատվության բարձր զգացողությամբ (Մըսրա թագավոր թող Մըսըր կենա, իմ հոր սարերում ի՞նչ գործ ունի նա...):

Պոեմում ներկայացված են գաղափարներ՝ խաղաղության պայքարը պատերազմի դեմ, կառուցման պայքարը ավերման դեմ, արդարության պայքարը անարդարության դեմ:

Թումանյանը պոեմում շրջանառել է նաև քրիստոնեական արժեքները. Մարութա վանքը վերականգնելով՝ Դավիթը վերականգնեց հավատը իր եկեղեցու նկատմամբ:

Պոեմը սկզբից մինչև վերջ շնչում է խորը հումանիզմով: Դա երևում է մանավանդ վերջին մասում, երբ Դավիթը Մելիքին սպանելուց հետո դիմում է Սարա գորբին՝ կոչ անելով խաղաղ ու հայրենաշեն աշխատանքով զբաղվել:

Համակ ուշադրություն դարձած՝ մտերմիկ միջավայրում վայելում էինք մեր սրբազան հուշարձանի՝ էպոսի և Յուր. Թումանյանի համանուն պոեմի նորովի մեկնաբանություններն ու բացահայտումները և չէինք ուզում լքել դախիլիցը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակում իր ինքնատիպ տեղը զբաղեցրած «Սասունցի Դավիթ» էպոսը դեռ շատ շերտեր ու գաղտնի խորշեր ունի բացահայտելու համար:

Իր խոսքի ավարտին թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը համեմատական անցկացրեց Դավթի կոչի և 1994 թվականին կնքված զինադադարի միջև ու ցավով նշեց, որ վերջինը ի չարս օգտագործվեց... ու մենք դարձանք փախստական:

Արցախի թեմի գրասենյակում տեղի ունեցած միջոցառումը նվիրված էր Արցախի անկախության օրվան: Արցախի անկախության համար 33 տարի շարունակ պայքարել է ողջ հայությունը, որի համար նահատակվել են հազարավոր քաջորդիներ: 33 տարի շարունակ հայության սուրբ երազանքն է եղել 1988-ի խորհուրդը՝ մայր հայրենիքին միավորվելու գաղափարը:

Արցախի թեմը շարունակում է լինել արցախահայերի կողքին, որը պայքարում է իր իրավունքների համար և հոգևոր խոսքի կարիք ունի: Կարևոր է, որ արցախահայությունը միասնական ու համախմբված լինի և փորձի ուժ գտնել վերականգնելու կորցրածը:

Բոլորը եկել էին՝ աղոթելու մեր քաջորդիների հիշատակին:

Մեր պայքարը համառոտն է շարունակվելու է:

Սուրյա ՂԱԶԱՐՅԱՆ

ՎԵՐԱՊՐՈՒՄ

ԱՂԵՏՆԵՐՈՎ ԱՆՑԱՆ ԱՐՑԱԽԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ

Ամեն անգամ Արցախը սրտիս մեջ փայփայած էմ խոսք գրում: Ցավախառն են ապրումներս, երբ խորտակված են տեսնում հայրենիքում խաղաղ ապրելու երազանքները...

Հազարավոր արցախցիների իրավունքներ խախտվեցին, երբ շրջափակման մեջ էինք, նկուղներում կուչ եկած, պատերազմի, բենզինեղակայանի պայթյունի սարսափով, բռնատեղահանության ճանապարհին...

Ժամանակի ու տարածության մեջ երբեմն ինձ մոտ փոխվում է ես-ի գիտակցումը, ու հայացքս գամվում է մի կետի... Մտածումներիս խառնարանում մեր շուրջը բախումներ են, որոգայթներ, ծուղակներ բազմակի, որոնցից ձերբազատվելու հնարը չեն տեսնում, երբ օրեցօր ամպեր են կուտակվում մայր երկրի գլխավերևում:

Իմ ես-ն ընդհանրական է դառնում, ու փորձում են նրա մեջ տեղավորել գոնե այն 120 թե 150 հազարին... Չեն տեղավորվում՝ իրենց բազմաչարչար կյանքով, ապրած տառապանքով, այնքան մեծ կորուստներով...

Ստիպված բաժանում, զատում են միմյանցից՝ ըստ դառնության, մեծագույն վշտի խորության... Ուզում են տեղավորել նրանց լույսի մատյանում, բայց տեսնում են, որ հայրենագուրկներիս տառապանքն օր օրի խտանում է:

1

Արցախի շրջափակման ժամանակ՝ դեռևս անցած ամռան արձակուրդային օրերին, հաճախ էի լսում՝ Արցախում դասեր լինելու են...

Հիշողությանս մեջ մեր պատմությունն էր նորացվում, երբ ցեղասպանվող, Դեր-Ջորի անապատ քված հայ մայրը ավազի վրա էր հայերեն տառերը սովորեցրել իր զավակին, երբ հայրենիքի համար կյանքը նվիրաբերող հայը վերջին շնչում իր արյամբ էր հայերեն տառեր գրել՝ հավերժ հայեցի ապրելու պատգամը հղելով սերնդին:

Դժվար էր, երբ կողքից լսում էի ծնողի խոսքը, թե իր երեխաներին չի կարողանալու սոված ուղարկել դպրոց:

«Հաց չկա»-ն զնգում էր մեր երեխաների ականջներում: Ու մտածում էինք, թե ինչպես ենք մայրելու նրանց աչքերին, երբ գիտեինք, որ դարը մերը չէ, երբ գիտեինք, որ շատ հարցերի պատասխաններ մնալու են օդում: Ու մի անպատասխան հարց թևածում էր մեր շուրջը՝ ինչո՞ւ են մեղավոր մեր երեխաները, որ պատերազմներով անցան, բախվեցին հայրենիք, հարազատներ կորցնելու վտանգին, դարձան այդ աղետալի օրերի վկաները՝ իրենց վրա կրելով կյանքի դառնությունների կնիքը:

Գոյաբանական խնդրի առջև լինելով, հայրենիք կորցնելու ահասարուտ օրերի մղձավանջով անցնելով՝ հասկանում էինք, որ պիտի կրթենք սերնդին, ինչպես էլ լինի, ուսուցանենք, որքան ինքնաբերական էր, դաստիարակենք այնպես, որ ոչ մեկը չզգա իր ծանրությունն այս հողի վրա, ու դառնա մեկը, ով շունչ է տալիս, ապրելու հույս, ոգի, որ հայեցի կյանքը շարունակվի:

Ասում էին՝ տեսր չկա, գրիչ չկա, որտե՞ղ են գրելու աշակերտները: Ստույգ չգիտեինք, գուցե կավիճ էլ

չլիներ՝ գրատախտակին գրելու համար, բայց մենք պատրաստ էինք մեր ձեռքերի ակերը տետրեր դարձնել, մատները՝ գրիչներ, մեր ուսանելի խոսքը՝ հասանելի, որ չտուժի կյանքի մաքառումների կիզակետում հայտնված սերունդը:

Այդ դժվարին ժամանակներում խոցելի էինք բոլորս, և պատրաստ՝ կյանքի կոչելու դպրոցական առօրյան, որ ապրեցնենք սերնդին՝ մեր հայացքն ուղղած լուսավոր գալիքին:

Բայց 2023-ի սեպտեմբերի 19-ին երկինքը փուլ եկավ գլխներիս... Կյանքը կանգ առավ, երբ մեր գլխավերևով թռնում անօդաչուներն էին մահ սփռում:



Պատերազմից օրեր առաջ էր: Կեսօրին մոտ երկրորդ հերթի դասերի շտապեցի: Ինչպես միշտ, վառելիք չկար, մեքենաների շարժ չկար... Ջարմանալիորեն մեռակ էինք՝ ես ու դպրոցի ճամփան:

Դպրոցի բակում հեռախոս փոխանցեցի աշակերտներից մեկին՝ խնդրելով կրթօջախի շենքի վերանորոգված մասնաբաժինը նկարել:

Այդպես էլ չհասցրինք վերանորոգված դպրոց մտնել, երբ 30 տարեկա ընթացքում մեր բոլոր շրջանավարտների, մեր աշակերտության, ուսուցիչներիս մեծ երազանքն էր, որ մենք էլ նորոգված ու պատերազմների հետքերը վերացած դպրոց մտնեինք, կահավորված դասարաններում դասավանդեինք...

Անավարտ մնաց դպրոցի մյուս հատվածի նորոգումը, իսկ այժմ վերանորոգված մասի հանդեպ փստսանք ունենք, որ այն պիտի վայելեն թշնամու երեխաները, որոնց մոտ մեր հանդեպ հայատյացություն սերմանում են դեռ մանկապարտեզից:

Մենք չէինք կարողանում, թե՞ չէինք ուզում թշնամու հանդեպ մույն ատելությունը սերմանել մեր երեխաների մոտ: Երևի թե չէինք ուզում ատելության դասը սերտած նվաճող ցեղին հավասարվել, երբ մեր տունը, դպրոցը, ճանապարհը, քարը, ծառը, թուփը հայրենիք են, որի պաշտպանության համար զոհաբերվեցին ոչ թե ատելության, այլ հայրենասիրության դասը սերտած մեր տղաները:

Ամհանդուրժելի է, երբ ոճանք հայրենասիրությունը վերացական հասկացություն են համարում: Այդ

մասին հարցնել է պետք երկնքի մաքուր հողիներին, որոնք իրենց կյանքը զոհաբերեցին հանուն հայրենիքի:

Հուսով ենք՝ մեր հարազատ դպրոցը չի հանդուրժի, որ իր պատերի ներսում անօրեների անեծքը հնչի, երբ որմերն ամրացնող շաղախի մեջ էլ հայրենյաց սեր կա, տունդարձի հույս՝ մեր զոհվածների երկնային հողիների կարոտալից սպասումով: Ինչչերի՞ միջով անցան Արցախի երեխաները...

Աշխարհի ո՞ր մասում հարցրին, թե այդ երեխաներն ինչպես են գոյություն քարշ տալիս շրջափակման դառը ամիսներին: Ովքե՞ր ի՞նչպես ու միջոցներ ձեռնարկեցին սովի

սել դասանյութերից:

Պատերազմից օրեր առաջ էր: Դասարան մտա, նպատակ չունեի դաս հարցնել, բայց շուտով ձեռքեր տեսա՝ վեր բարձրացրած:

Որքա՞ն գոհ էի աղջիկների գրագետ խոսքից, գրականության դասանյութի խորքային վերլուծությունից: Կարծես կյանքով լցվեցին, որ տեսան՝ հիացած են, իրենք էլ գոհ՝ ժպիտներ փոխանցեցին ինձ:

Շուտով դասարանի դուռը բացվեց: Շնչակտուր, դեմքը շառագունած՝ ներս մտավ նորեկ աշակերտը: Միանգամից վրա բերեց. «Ուշացա, հացի հերթում էի...»:

Չէի համարձակվում հարցնել՝ գոնե կարողացա՞ր հաց գնել: Կողքից մեկի հարցին պատասխանեց. «Երեկվանից են հերթագրված, վերջապես մեկ հաց հասավ ինձ»:

Դասարանում լռություն էր: Երկու սոված, գուցե կիսասոված աշակերտուհի «զերազանց» էին ստացել, իսկ կյանքի դաժան դպրոցով անցած մեկ աշակերտ էլ հերթերում գերազանցության հաղթահարել էր ժամեր ու ժամեր դարձել:

Առաջարկեցի աշակերտներին՝ իրենց մտորումները թղթին հանձնել: Հանկարծ մեկն ընդդիմացավ ինձ, թե տխուր բաների մասին չի սիրում գրել... Բայց հետո, երբ հայրենիք էր կորցրել, նա ինձ ուղարկեց «կյանքի տխուր բաների մասին» իր խառը շարադրանքը: Ես մխթարում էի նրան, որ նոր միջավայրին հարմարվի, շատ չհուսահատվի...

Դպրոցը, տունը, հայրենիքը մեզ երևում են երազներում, մեր հիշողություններում... Փորձում են հարմարեցնել ինձ, որ դպրոցին հրաժեշտ են տվել Արցախում՝ անցած տարվա դեռևս սեպտեմբերի 19-ին: Չհասցրի այդ օրը երկրորդ հերթով դասարան մտնել, դասի մուտքն ու ելքը իրար խառնվեցին... Այդպես էլ դպրոցի զանգի դողանջները մարեցին օդային տազանափ, ռումբերի ահասարուտ պայթյունների տակ:

Այստեղ՝ մայր երկրում, անցած ուստարում մի նոր իրականության մեջ էի, երբ աշակերտներս տարբեր դպրոցներում էին, ես վայելում էի նրանց ձեռքերումները հեռվից: Եվ որքա՞ն լավ էր, որ գոնե ինձ շոշափելի էին նրանց հաջողությունները:

«Բարև Ձեզ, տիկին Պողոսյան: Ափսո՛ս, որ Ձեզ նման մանկավարժն այլևս չի դասավանդում»:

Մասնակցել են հայոց լեզվի օլիմպիադային: Ամեն հարց կարդալիս Ձեր տվածն էի հիշում, որոնք օգնեցին, որ հարցերը ճիշտ գրեմ:

... Որոշեցի կիսվել Ձեզ հետ և ասել, որ շատ շնորհակալ եմ: Իմ բարձր միավորը Ձեր տված գիտելիքների արդյունքն է...

Արթիկի ավագ դպրոցն են հաճախում: Տնտեսագիտական են ընտրել: Ճիշտ է, շատ լավ են ընդունել թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները, բայց, միևնույն է, չեն կարողանում հարմարվել: Ամեն դասաժամի մտովի գնում են Մարտակերտ, մեր դասարանը...

Երեկ Ձեզ էի տեսել երազում: Դասարանում էինք, հայ գրականության ժամ էր...

Մենք գրուցեցինք, անգամ խոսեցինք իրավիճակից: Ինչպես միշտ, Ձեր խոսքերով հույս էիք տալիս մեզ, որ ամեն ինչ լավ է լինելու... Բայց զարթուցիչի ձայնից արթնացա ու

ափսոսացի, որ այդ ամենն ընդամենը երազ էր»:

Աննա Բաղմանյան

«Բարև Ձեզ, տիկին Պողոսյան: Ինչպե՞ս եք, չնայած դժվար է ինչպես լինելու մասին հարցնել: Մենք Աշտարակի Ոսկեվազ գյուղում ենք, բայց կարոտում ենք Արցախը: Մեր օրն սկսվում և ավարտվում է՝ Մարտակերտից նկարներ մայելով, պատմություններ պատմելով:

... Շուրջս ամեն բան Արցախն է հիշեցնում: Պահարանում գտա կտորն, մեր հացի կտորն էր: Նայեցի ու վերապրեցի ինձ դաժան, բայց և երջանիկ ամիսները: Այո՛, երջանիկ, երբ հայրենիքում էինք:

Ամեն օր մայում են ժամին և ինքս ինձ ասում՝ լույսերը անջատելու ժամն է, բայց լույսերը չեն անջատվում:

... Հուսով ենք, որ նորից գնալու ենք տուն: Առայսօր չեն հավատում, որ 24 ժամում այդպես ամեն բան կարող էր փոխվել: Փոխվեց կյանքը, փոխվեցինք մենք, և նույնիսկ փոխվեցին մեր աղոթքները:

Ձեզ առողջություն են ցանկանում, տիկին Պողոսյան, ամենաշատը ուզում են նորից ուսուցչի աթոռին նստեք Մարտակերտի մեր դպրոցում և մեզ դասավանդեք»:

Սելինե Բեջանյան

Ո՞վ կիմանար, որ սեպտեմբերի 18-ին իմ վերջին դասն էր լինելու 10-րդ հունամիտար դասարանում: Հանձնարարեցի գրել Արցախի շրջափակման մասին: Դասարանի աշակերտուհի Աստղիկ Ջավադյանի խոսքերի արձագանքն առայսօր ինձ լսելի են:

«Ինչո՞ւ հենց Արցախը պաշարման մեջ հայտնվեց, ինչո՞ւ այս ճակատագրին արժանացանք: Ինձ ամսից ավելի է, ինչ շրջափակման մեջ ենք, ինչ փակ է Մայր Հայաստանին կապող ճանապարհը, զագ չկա, լույսերը հովհարային անջատումներով են: Արցախում նաև սնունդ չկա: Մենք ուզում ենք անհոգ ապրել, խաղաղ երկրի տակ, որ ոչ մի պատերազմ չտեսնենք, բայց մեր մանկությունը թշնամին խլեց, և մեր տարիքին անհամապատասխան ու մեր կամքին հակառակ՝ ավելի շուտ մեծացանք՝ պատերազմներ տեսնելով, այս ամիսներին էլ՝ շրջափակման մեջ գտնվելով: Ես հոգնել եմ վախով ապրելուց՝ անընդհատ պատկերացնելով ամենավատը, որ կարող է մի օր մեր բնօրրանից դուրս գանք ու այլևս չկարողանանք հետ վերադառնալ: Ե՛րբ են աշխարհի կույր աչքերը բացվելու, որ թույլ չտան՝ մենք հայրենիք կորցնենք»:

Երբ Արցախում ապրող սերունդը կանխավ զգացել էր հայրենիք կորցնելու վտանգը, աշխարհը կույր ձևացավ, և կապի միջոցներից, գազի ու լույսից զրկված, սովահարության մատնված՝ մեր շուրջն ամեն ինչ խլացավ թշնամու արձակած ռումբերի տեղատարափի տակ:

Ինչո՞վ էր մեղավոր նոր սերունդը, որ արժանացավ այս դաժան ճակատագրին, ովքե՞ր են, որ պիտի պատասխան տան, բայց դեռ չեն պատժվել մեզ անհայրենիք թողնելու համար: Գիտեմ, որ նրանք շատ են, ամեն մեկը՝ հերթով... Դատաստան պիտի լինի...

ՀԱՅՐԵՆԱԿԱՆՉ

ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ԱՐՑԱՆՅԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՆԱԿՑՈՒԹՅԱՐ

Երևանում գործող «Հուստ տուն» բարեգործական կենտրոնն արդեն 30 տարվա պատմություն ունի: Հիրավի հուստ տունն է այդ կենտրոնը, որն ստեղծման օրվանից բարեգործական տարբեր ծրագրեր է իրականացնում:

Երբար ամուսիններ Մարգարետ և Գևորգ Վալիսերները, որոնք ցերեկային ընթացքում երեխաների հետ նաև նկարեցին, փորձում էին շփվել հայոց լեզվով: Մ. Պողոսյանը շնորհակալություն հայտնեց նաև բոլոր աջակիցներին՝ Ալբերտ Տոնեյանին, որը կենտրոնին նվիրեց կապի միջոցներ՝ արշավների ժամանակ օգտագործելու համար, Հեղինե Վանեցյանին, Դիրան Բաղդասյանին, այլոց:



Ցերեկային ընթացքում հիմնականում երևանին ու Արցախին նվիրված երգերով հանդես եկավ արցախցի երեխաների երգչախումբը: Ցուցադրված էին նաև նույն երեխաների ծննդի աշխատանքները, նկարները, այլ գործեր՝ հիմնականում Արցախին նվիրված: Երեխաները երգեցին նաև Վալերի Դազարյանի հեղինակային երգը՝ «Տուն տարեք...»:

Ինչ խոսք, այսօր հազարավոր արցախցիների երգազանքն է տուն վերադառնալը: Առավել շատ են իրենց տանը կարոտում երեխաները, և նրանց կատարմամբ այս երգը հնչեց երկու անգամ՝ արցունք պոկելով ներկայից աչքերից: Երգի կատարմանը ներկա էր նաև հեղինակը: Ու արցախցի մաքրամաքուր երեխաների շուրթերից լսում ենք.

Մարեք, հով արեք, Հոգու ճար արեք,

Իրականացվող ծրագրերի հիմնական շահառուներն են միայնակ տարեցները, հաշմանդամները, կարիքավոր ընտանիքները, ծնողազուրկ երեխաները և այլոք: Վերջին տարիներին շահառուների շարքում կան նաև Արցախից բռնի տեղահանվածներ, սիրիահայեր: Այսօր առավել է ծանրացել կենտրոնի գործունեությունը, ու «Հուստ տուն»-ը շարունակում է մարդասիրական, հայրենասեր իր աշխատանքը: Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում և մինչ օրս «Հուստ տուն»-ը դարձել է նաև արցախցիների ժամանակակից կարևոր կառույցներից մեկը: 2022թ. հուլիսից կենտրոնում գործում է «Հուլիսի լի և առողջ մանկություն» ծրագիրը, որի շրջանակներում մոտ 300 երեխա՝ հիմնականում Արցախից բռնի տեղահանվածներ, սիրիահայեր, ծնողազուրկ ու սոցիալապես անապահովներ, այստեղ ստանում են արտադպրոցական կրթություն: Կենտրոնում գործում են նկարչության, ծնագործության, երգի, պարի, թաղիքագործության, լողի, շախմատի և այլ խմբակներ, որոնք վարում են արհեստավարժ խմբավարները: Երեխաների հետ աշխատում են նաև հոգեբաններ:

Օգոստոսի 28-ին «Հուստ տուն» կենտրոնում կայացավ «Արցախի գրնգուն գույները» խորագիրը կրող ցերեկային արցախցի երեխաների մասնակցությամբ ու բարերարների ներկայությամբ: Ողջունելով ներկայից՝ «Հուստ տուն» կենտրոնի տնօրեն Մովսես Պողոսյանը կարևորեց արցախցի երեխաների հետ աշխատանքը՝ հավատով, որ մի օր նրանք իրենց տունն են վերադառնալու: Տեղեկացրեց՝ օրվա ցերեկայինը եզրափակում են «Հուստի լի և առողջ մանկություն» ծրագրի ամառային շրջանը: Այս ընթացքում երեխաների համար կազմակերպել են բնապահպանական արշավներ, էքսկուրսիաներ, մշակութային տարբեր միջոցառումներ: Մ. Պողոսյանը կարևորեց բարերարների դերը, որ առանց նրանց օժանդակության դժվար է լինելու: Ներկա էին «Հուստ տուն» բարեգործական կենտրոնի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Գևորգ Դազարյանը՝ մայրիկի՝ արմատներով Կիլիկիայից Մարի Թասայանի հետ: Նրանց ընտանիքն արդեն մի քանի տարի է՝ տարբեր ծրագրեր իրականացնելու համար աջակցում է հիմնադրամին, որն ունի նաև «Գթության խոհանոց»: Մ. Պողոսյանը մեծ սիրով ներկայացրեց Մ. Թասայանին, որը կենտրոնի համար հիրավի բարերար է: Մշտապես կենտրոնի կողքին են նաև գերմանացի բա-



Ինձ իմ տուն տարեք, Տուն տարեք, տուն տարեք...

... Էտ էն ժամանակ էր, երբ բոլորը կային,

Կային հարազատներ, կար խաղաղություն:

Բոլորս միասին էինք մեր ընտանիքում,

Հետո ամեն ինչ խառնվեց, տունը մոխրացավ,

Արկը տանիքում, ծուխը բարձրացավ...

«Ղարաբաղ» երգը նույնպես հուզիչ էր, ու շատերը տխրեցին, իրենց հարազատ տունը հիշեցին, որ այսօր թշնամու տիրապետության տակ է:

Ղարաբաղ իմ, կանաչ բաղ իմ, Կարոտել եմ վարդիկ շաղին, Հոգուս մուրազի պես, Սիրում եմ քեզ, իմ Ղարաբաղ:

Մշակութային մասից հետո տեղի ունեցավ նվերների հանձնում երեխաներին և հյուրասիրություն:

«Հուստ տուն» կենտրոնում գործում է նաև ֆրանսիական «La Guilde» կազմակերպության կողմից համաֆինանսավորվող «Աջակցություն Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին» ծրագիրը, որի ընթացքում Արցախից

բռնի տեղահանված 6 կին մասնակցում է խոհարարական դասընթացների: Կենտրոնի տնօրենն անձամբ հյուրասիրեց ներկայից՝ ուրախությամբ նշելով՝ սնունդը դասընթացների մասնակիցների ծնոքով է պատրաստված:

Ընթացքում գրուցեցի խմբավարների, երեխաների հետ: Երգչախմբի ղեկավար Անահիտ Մարգարյանն ասաց՝ ֆեբրուարյան էջով իմացել է կազմակերպվող ցերեկային մասին և սիրով աշխատել է երեխաների հետ, որոնք հանդես եկան գերազանց: Ձեռքի աշխատանքների խմբավար Անայա Առուստամյանը բնակվել է Արցախի Ջիվանի, ապա Նորայրու բնակավայրերում, աշխատել դպրոցներում՝ որպես անգլերենի ուսուցչուհի: Երկու տարի աշխատել է Արցախի անվտանգության խորհրդում: 2023թ. սեպտեմբերյան ողբերգական դեպքերից հետո տեղափոխվել է Երևան ու վարձով բնակվում է Ձեյթուն բաղնաստան: Գոհ է «Հուստ տուն» կենտրոնի ղեկավարությունից: Պարուսյոյ Մարինե Մարտիրոսյանի ղեկավարությամբ երեխաները նաև պարեցին: Ցերեկային մասնակիցներից Գառնիկ Մասիսի Հայրապետյանը ճարտար քաղաքից է: Իրենից փոքր ունի 5 եղբայր: Հավատում է՝ տուն դառնալու են: Հինգերորդ դասարանցի Անդրեյ Միրզոյանն ու վեցերորդի Անդրանիկ Մետրոսյանը բնակվել են Ստեփանակերտում, արդեն մեկ տարի է՝ հեռացել են հարազատ տնից, կարոտում են: Ու հավատով էին երգում, որ Ղարաբաղը կանչում է: Արցախի Մարտունի քաղաքից է Տիգրան Մարգարյանը, որի շապիկին «Մենք ենք մեր սարերը» հուշարձան էր նկարված: Տղաներն ասացին՝ լավ են սովորում նաև Երևանի դպրոցներում: 5-ամյա Դավիթը հիշում է իրենց տունը, իր խաղալիքները, որ թողել է բակում: Ավագ տարիքի երեխաներից Սերգեյ Դադանյանը Հաղորթից է, 2020-ին է նրանց ընտանիքը հեռացել հայրենի տնից: Այս ուստարում սովորելու է 11-րդ դասարանում: Ասաց՝ լավ է սովորում: Ընկերը՝ Հակոբ Շահրամանյանը, ճարտարից է: Անցած տարի այս օրերին դեռ իր հարազատ տանն էր, բայց եղավ ցավալին: Հաճախելու է 10-րդ դասարան: Տղաները կարևորեցին բանակում ծառայելը, որ պատրաստ լինեն տուն դառնալու: Խոհարարական դասընթացների մասնակիցներից Ելենա Խոսրովյանը 5 երեխաների մայր է: Մինչև 2020թ. 44-օրյա պատերազմը բնակվում էին Քաջաթաղի շրջանի Մոշաթաղ գյուղական համայնքի Հեղինկ պատմական գյուղում, որտեղ կանգուն էր միջնադարյան Սուրբ Գևորգ եկեղեցին: Ամուսինը՝ Կարեն Պողոսյանը, շինարար է. մասնակցել է Հերիկի կայացման գործին: 2020թ. աշնանը տեղափոխվել են Երևան: Ջավակները՝ Ալենը, Արենը, Անին, Աննան, նույնպես երգչախմբում էին, իսկ նրանց փոքրիկ եղբայր Արամն ունկնդիր էր: Հիշեցինք Հերիկ գյուղը, որտեղ 2016թ. «Հայրենասեր» ՀԿ-ի կողմից դպրոցի նոր շենք կառուցվեց, կրթօջախը կոչվեց 2016թ. ապրիլյան բաշտոյախ անձնա հերոս Ռոբերտ Աբաջյանի անունով: Նկարչության խմբակի փոքրիկներից Ստելան իր նկարած «Մենք ենք մեր սարերը» աշխատանքը նվիրեց կենտրոնի տնօրենին, որի համար դա շատ թանկ պարզ է:

ՏՈՒՆՊԱՐԶԻ ՀՈՒՅՈՒ ԳԻ ՄԱՐԵԼ

Մեր ազգը վերստին միավորվեց ու վերադարձավ իր արմատներին Արցախյան շարժման օրերին: Խորհրդային կարգերի օրոք արհեստական ստեղծված Ադրբեջանի Հանրապետության կազմում մնացին հայոց տարածքների մեծ մասը՝ Ուտիքը, Արցախը, Նախիջևանը, Սյունիքի մի հատվածը և այլն: 70 տարի մնալով Ադրբեջանի կազմում՝ Նախիջևանը 1980-ականներին գրեթե հայաթափ էր եղել: Նույն ճակատագրին էր արժանանալու նաև Արցախը, և դրա դեմն առնելու համար 1988-ի փետրվարից արդեն բացահայտ ու շատ ակտիվ սկսվեց Արցախյան շարժումը, որն էլ դարձավ հայ ազգի միավորման կետը: Բազմափուլ և անհաջող ժամանակահատվածներում Ստեփանակերտում, Երևանում և այլ վայրերում Արցախի հարցի վերաբերյալ քննարկվեցին համար էին: Իհարկե, «Միացում»-ը, որ մեր ազգի երազանքն էր, կայացավ հազարավոր հայորդիների նահատակության, տառապանքի և այլ դժվարությունների գնով: Բայց եղավ: 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց Արցախի Հանրապետության Անկախությունը: Մինչ այդ, խորհրդային բանակի ու ադրբեջանական ոստիկանական և այլ ռազմական ուժերի համատեղ գործողությունների ընթացքում հայաթափ էին եղել Հյուսիսային Արցախը, Հաղորթի հարավային բնակավայրերը, Բերդաձորն ու այլ տարածքներ: Բայց կար հավատ՝ լինելու է հաղթանակը, ազատագրվելու են գերված հայրենի տարածքները: Ու նույն 91-ի ղեկավարների 10-ին կայացած հանրաքվեով Արցախի ժողովուրդն ընտրեց անկախության ճանապարհը: 1992-ի մայիսի 8-18-ին ազատագրվեցին Շուշին ու Բերդաձորը, Լաչին-Բերդորը, և կայացավ մեր ազգի երազանքը՝ Արցախ-Մայր հայրենիք ՄԻՍՏՈՒՄԸ: Բայց դեռ անցելու ևս 3 տարի կար, որ եղավ խաղաղություն, ու Արցախը բռնեց կայացման ճանապարհը: Ազատագրված Արցախը դարձավ նաև մեր հպարտությունը, աշխարհի հային ճանաչեց որպես իր երկրի տեր ու պաշտպան: Արցախի Հանրապետության կազմում վերահայացման նաև տարբեր ժամանակներում մեր ժողովրդից իված տարածքներ՝ Քաջաթաղը, Կովսականը, Քաշուհիքը, Քարվաճաղը, Ալնան, Ջրականը և այլն: Ու յուրաքանչյուր տարի Արցախ վերածնված երկրում մեծ շուքով էինք նշում մեր հաղթանակների օրերը: Ստեփանակերտում, շրջկենտրոններում, այլ բնակավայրերում տեղի էին ունենում տոնակատված միջոցառումներ: Սակայն եղավ 44-օրյա պատերազմը, ու այսօր հայաթափ է Արցախը: Երևանում, ՀՀ տարբեր մարզերում են տեղավորվել արցախցիները, կան արդեն արտերկիր գնացողներ:



Արցախի Հանրապետության անկախության հռչակման 33-ամյակի օրը՝ սեպտեմբերի 2-ին, Երևանում գործող Արցախի Հանրապետության ներկայացուցչությունում մարդաշատ էր: Առաջին անգամ հայաթափ է Արցախը, և տոնը տխուր խորհրդով նշվում է Արցախի ներկայացուցչությունում՝ միակ վայրը, որն Արցախի պետականությունը դեռ հիշատակվում է: Ներկայացուցչություն էին այցելում Արցախի ճակատագրով մտահոգ մեր հայրենակիցներ, ԱՀ կառավարության ու Աժ ներկայացուցիչներ: Բռնի տեղահանված արցախցիները եկել էին հավատով, տունդարձի մասին որևէ լուր չլսելու ակնկալիքով: Ներկայացուցչության շենքի բակում լուսանկարների ցուցադրություն էր, որում Արցախյան շարժման սկզբից մինչև մեր օրերը պատմող կարդեր են: Շենքի ձախ անկյունում՝ մուտքի մոտ «Արցախի Հանրապետության օր» և «Ազատություն» Արցախի ռազմաքաղաքական ղեկավարներին» գրություններով 2 մեծադիր պատանուներ են տեղադրված: Շենքի միջանցքում, որտեղ լրագրողները գրուցում էին օրվա խորհրդի հետ կապված անձանց հետ, նաև Արցախի տարբեր ոլորտների մասին պատմող գրքեր էին ցուցադրվում: Բոլոր այցելուների նպատակն ու երազանքը մեկն է՝ տուն՝ Արցախ վերադառնալ: Շատերը հավատում են տունդարձի իրողությանը և այդ հարցում հիմնականում կարևորում են ՀՀ իշխանությունների դերը, որն անորոշ է: Այցելուները նաև իրենց գրությունն էին թողնում հատուկ մատյանում:

Այստեղ հանդիպեցի շատերի, որոնց հետ ծանոթացել են սկսած 1988 թվականից, որոնց հետ մասնակցել են Արցախի ազատագրական պատերազմներին, ազատագրումից հետո՝ մեր նորանկախ երկրի կայացման գործին: Ու ցավ ենք ապրում, մտովի վերադառնում 30 և ավելի տարիներ առաջ: ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան Գուրգեն Մելիքյանը, որը Արցախյան շարժման առաջին օրվանից իր գործունեությամբ շատ է աջակցել պայքարող ու կայացող երկրին, որը հիմնել է «Գուրգեն Մելիքյանի» Քաջաթաղի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամը, ցավով է հիշում իր նախածեռնությամբ իրականացրած աշխատանքները: Միայն Բերդորի հարակից տարածքներում հիմնել էր 20-ից ավելի այգի ու պուրակ, ծառուղի, որոնցում նաև հուշակոթողներ կային: Հանդիպում են Արցախի հանրային հեռուստատեսության աշխատակիցներին, որոնց հետ շատ ենք եղել Քաջաթաղի տարբեր վայրերում: Հիշում ենք՝ մեր երեխաներն ինչպիսի ոգևորությամբ էին ասֆալտի վրա տոնակատ օրերին Դաղիվանք ու Գանձասար, Ծիծեռնականք, հաղթանակ տարած զինվոր ու տանկ, Եռագույն դրոշ նկարում: Մշակութային բազում խմբեր էին մասնակից լինում տոնական միջոցառումներին: Լինում էին նաև այցել գործառնասեր, առաջնագիծ: Իսկ այսօր միայն կարոտն է տիրողը. գերված Արցախը կանչում է...

ՄԵՐ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԸ

ՄԱՐԶՎԵԼ, ՀԱՐԹԱԶԱՐԵԼ ՆՈՐ ԲԱՐՉՈՒՆՔՆԵՐ

Շուրջ մեկ տարի է անցել արցախցիների համար ամենադաժան ու ողբերգալի սեպտեմբերի իրադարձություններից, ինչի հետևանքով Արցախի ժողովուրդը ստիպված եղավ բռնատեղահանվել: Շատ-շատերը հաստատվեցին Մայր Հայաստանում, ոմանք էլ բարեկեցիկ ապրելու հնարավորություն ու հանգստություն գտան աշխարհի տարբեր ծայրերում՝ հավատալով, որ Արցախ վերադառնալու օրը գալու է, նորից համախմբվելու ենք ու ապրենք մեր սուրբ հողում:

Արցախյան մարզաշխարհի փայլուն աստղ, կիոկուշինկայ կարատեի լեգենդ, Եվրոպայի ու աշխարհի բազմակի չեմպիոն, հարզված մարզիչ ու հաճելի անձնավորություն Արթուր Առուշանյանը բռնատեղահանվելուց հետո նոր բնակության վայր է ընտրել Հարավային Ամերիկայի խոշորագույն երկիր Արգենտինան: Մինչդեռ տարածքային հեռավորությունն ու ժամային գոտիների տարբերությունը չխանգարեցին մեզ հարցազրույց ունենալ «Լուսարար»-ի սիրելի հյուրի հետ: Արցախցի չեմպիոնը մեծ ուրախությամբ պատասխանեց մեր հարցերին օնլայն ձևաչափով:

- Արթուր, շրջափակման պայմաններում դժվարությունները հաղթահարելով շարունակում էիք մարզիկներ պատրաստել ու ինքներդ մարզվել. համոզումը կա՞ր, որ ուր որ է կավարտվի մղձավանջը, եւ նորից նույն հունով կշարունակվի Արցախի մարզական կյանքը:

- Այո՛, հույս ու հավատ կար, որ մի օր կավարտվի շրջափակումը: Բայց մենք լրիվությամբ հարմարվել էինք շրջափակման հետևանքով առաջացած դժվարագույն պայմաններին: Այնպես էինք կազմակերպում պարապմունքները, որ մարզիկներին վնաս չգար: Լիարժեք սննդի եւ տրանսպորտի բացակայության պայմաններում, հատկապես այն մարզիկներին, որոնք բնակվում էին մարզադահլիճից հեռու, տրվում էր ծրագիր, որով կարելի էր ինքնուրույն մարզվել՝ առանց դահլիճ զնալու: Կարատեի հնարքներից ու մարտարվեստների սկզբունքներով դաստիարակելուց բացի, մարզիկների հետ աշխատում էինք նաեւ այն ուղղությամբ, թե ինչ պետք է անել երկարաժամկետ բլոկայայի կամ պատերազմի դեպքում: Ամեն դեպքում անհրաժեշտ էր նախապատրաստել մարզիկներին հնարավոր սցենարներով:

- Սեպտեմբերի 19-ին... Ձեր ապրումների եւ գործողությունների մասին:

- Սեպտեմբերի 19-ի առավոտյան ժամը 7-ին արդեն աշխատանքի էի: Մտել էի աշխարհազոր: Տեղեկացված էինք, որ լարված է իրավիճակը ու բախումներ են սպասվում, բայց չգիտեինք, որ այդ աստիճան լայնածավալ հարձակման կենթարկվենք: Համեմայն դեպս պատրաստ էինք յուրաքանչյուր մեր դիրքերում: Ես Ստեփանակերտում էի՝ որպես հրամանատար: Առաջին հարվածը, որը տեսանելի էր մեզ համար, Ստեփանակերտի գերեզմանների թաղամասի ուղղությամբ էր, ՔՅԵ-ի վրա: Այդ պահին մարմնովս մեկ սարսուռ անցավ, քանի որ մտածեցի, որ բոլոր երեխաները դպրոցներում են, իսկ շատ մարդիկ չգիտեն, թե ինչ պետք է անել: Երբ արդեն իջնում էի դեպի իմ բազա, ընկղմվել էի քաղաքի քառ-

սի մեջ, դժվար ու աննկարագրելի պահեր էին: Խուճապի մատնված մարդիկ իրար էին անցել, ամեն մեկը վազում էր որեւէ ուղղությամբ, վառելիքի պակասության պատճառով անզամ ավտոմեքենաներ չկային, որպեսզի ծնողները հասնեին իրենց երեխաների մոտ: Իսկ հաջորդող դաժան ու ողբերգալի դեպքերը այդ օրը դարձրին մեր հիշողության մեջ որպես ամենաժանր ու դժոխային օր:



- Արթուր, հայտնի է, որ առաջարկներ էիք ստանում արտերկրում մարզական կամ մարզական գործունեություն ծավալելու վերաբերյալ, բազմաթիվ սեմինարներ եք վարել հայրենիքից դուրս, սակայն նախընտրում էիք ապրել ու արարել Արցախում, իսկ աշխարհի տարբեր մրցահարթակներում Ձեր փայլուն հաղթանակները օգտագործում էիք ի շահ Արցախի անունը միշտ բարձր պահելու, Արցախի աշխարհին ճանաչելի դարձնելու նպատակով: Ինչպե՞ս անդրադարձան Ձեզ վրա Արցախից ստիպված հեռանալն ու գաղթի ճանապարհը:

- Դա իմ կյանքի ամենադաժան պահերից մեկն է. փորձում էի տարբեր պատճառներով հետաձգել մեր դուրս գալը: Ընտանիքիս անդամները հաճախակի հարցնում էին, թե մենք երբ ենք դուրս գալու, ասում էի, որ շուտով, բայց ձգձգում էի նույնիսկ րոպեները, որ մի քիչ էլ մնա հարազատ վայրում: Շատ դժվար էր ընդունել, որ արդեն ոչ մի բան չի փոխվի, ու դուրս գալն է միակ ճիշտ տարբերակն այդ պահին: Այնպես արեցի, որ ինձանից հետո տունս մտնել չկարողանամ: Ճանապարհին անընդհատ մեկ գաղափարի շուրջ էին մտքերս, որ միանշանակ վերադառնալու ենք մեր հայրենիք, ու կարելու էր, թե մեր շենքը իր տեղում կլինի թե չէ, եթե նույնիսկ տունս չլինի էլ, կարելու էր այն էլ, որ վերադառնանք մեր հողը, իսկ տունը վերականգնելը ժամանակի հարց է:

- Ի՞նչ հնարավոր եղավ Ձեզ հետ դուրս բերել, ի՞նչ թողեցիք Արցախում: Ի՞նչ ճակատագրի արժանացան Ձեր քրտինքով վաստակած՝ փառավոր հաղթանակները խորհր-

դանշող բազմաթիվ գավաթները, մեդալները:

- Կարողացել եմ դուրս բերել մեդալներ, գավաթներ, բայց քառասունից ավել գավաթներ մնացել են Ստեփանակերտում՝ իմ տատիկի տանը: Ինձ հետ վերցրել եմ հիմնականում ինձ համար մեծ արժեք ունեցող՝ աշխարհի առաջնության գավաթները եւ մի քանի հատ էլ տարբեր առաջնություններից, ընդհանուր՝ 7 գավաթ: Լավ է, որ կարողացել եմ գոնե դրանք հետս վերցնել: Ճիշտն ասած՝ այդ ժամանակ մտածում էի ավելի կարևոր բաների մասին, մտածում էի Արցախի հետ կապված իրերը հետս վերցնել ու չկորցնել մեր սուրբ հայրենիքի հետ կապված մեր հիշողությունները: Պատմության մեջ դեպքեր կան, երբ մարդիկ կորցնելով իրենց հայրենիքը, որոշ ժամանակ անց կորցրել են նաեւ իրենց հիշողությունները հայրենիքի մասին: Մենք չպետք է այդպես անենք:

- Կյանքը բռնատեղահանվելուց հետո:

- Ամենադժվար ժամանակներն էին բռնատեղահանվելուց հետո: Անզամ պատերազմների ժամանակ, շրջափակման դժվարությունների ընթացքում այդ աստիճան անհարթությունները: Պատմության մեջ դեպքեր կան, երբ մարդիկ կորցնելով իրենց հայրենիքը, որոշ ժամանակ անց կորցրել են նաեւ իրենց հիշողությունները հայրենիքի մասին: Մենք չպետք է այդպես անենք:

մարտություն ու հոգեկան ծանր ապրումներ չեմ ունեցել: Ուղեղս չէր հանգստանում, չէի կարողանում ընդունել ու համակերպվել վիճակի հետ: Անընդհատ քայլեր էի փնտրում, թե ի՞նչն էր կարելի ճիշտ անել, որտե՞ղ սխալվեցի՞նք, ի՞նչն էր պետք փոխել, բայց միաժամանակ գիտակցում, որ ինչ էլ անեիք, միեւնույն է՝ մենք քիչ էինք, քանակապես շատ էինք գիջում ու մեր ձեռքում ոչ մի բան չկար: Որտեղով որ գնում էի, ինձ թվում էր, թե Ստեփանակերտի փողոցներով եմ շարժվում, չէի կենտրոնանում: Մեքենան վարելիս հաճախ հասկանում էի, որ մի քանի փողոց անցել եմ՝ չզգալով, որ արդեն անցել եմ: Երեք ամիս մնացել եմ Երեւանում, հետո որոշել ընտանիքիս հետ տեղափոխվել Արգենտինա:

- Ինչո՞ւ Արգենտինա, ինչո՞վ է պայմանավորված այդտեղ բնակվելու որոշումը:

- Հստակ պատասխան այդ հարցին չեմ կարող տալ: Որոշել ենք Արգենտինա, քանի որ տարբեր տեղերից մարդիկ ասում էին, որ ամենուրեք բոլորին ազդող՝ նույն դժվարություններն են ու նույն անորոշությունը աշխարհաքաղաքական վիճակի առումով: Հասկացել էի, որ այդ առումով Արգենտինայում հանգիստ է, ինչնում համոզվեցի՞նք այստեղ բնակվելով:

- Պատմե՛ք Ձեր ներկայի մարզական կյանքի մասին:

- Ներկայում մարզվում եմ Արգենտինայում ինչպես կիոկուշին կարատեով, այնպես էլ դրան զուգահեռ քիբրոքսինգով: Ամեն ինչ մնացել է այսպես ասած՝ անցյալում, այժմ ուզում եմ ուրիշ մարզածել էլ փորձել հետաքրքրության համար: Նշեմ, որ քիբրոքսինգը բավականին լավ է ստացվում ինձ մոտ: Արդեն հասցրել եմ Արգենտինայի քիբրոքսինգի գավաթի հաղթող ճանաչվել իմ քառային կարգում: Կիոկուշինով նույնպես բացարձակ քառային կարգում չեմ պիտի եմ ճանաչվել: Սեպտեմբերին նորից մասնակցելու եմ կիոկուշին կարատեի առաջնությանը՝ Չիլի-Արգենտինա համադիպանը: Դրան զուգահեռ հավանաբար խոսք կբացվի ու կսկսեն մարզել, ինչպես նաեւ սեմինարներ վարելու առաջարկներ են ստանում Լատինական Ամերիկայի տարբեր տեղերից: Արդեն պայմանավորվում ենք ժամկետների ու վայրերի մասին:

- Ի՞նչ ընդհանրություն ունեն կիոկուշինկայ կարատեի ու քիբրոքսինգը:

- Կիոկուշինն ու քիբրոքսը որքան մնան, այնքան էլ տարբեր մարզածելեր են: Կիոկուշինում կան ձեռքերով հարվածներ մարմնին, իսկ քիբրոքսինգում թույլատրվում է նաեւ հարված զլխին: Ոչ մասնագետի համար կարող է հեշտ թվալ կիոկուշին պարապած մարզիկի անցումը քիբրոքսի, սակայն այդքան էլ հեշտ չէ թեկուզ մի քանի սմ-ով բարձրացրած ձեռքերով աշխատել: Իսկ ոտքերի առումով կիոկուշինի մարզիկը բավականին առավելություն ունի քիբրոքսում:

- Ի՞նչ կասեիք առաջիկա անելիքների, ծրագրերի ու նպատակների մասին:

- Առաջիկա ծրագրերը նույնն են՝ մարզվել, հաղթահարել նոր բարձունքներ, անընդհատ ձգտել նոր ու ավելի բարձր նվաճումների: Ես համոզված եմ, որ մենք վերադառնալու ենք, իսկ մինչ վերադառնալը յուրաքանչյուրս պետք է առավելագույնը ձգտենք մեր ոլորտում բարձունքների հասնել, բացի դրանից, ուսումնասիրել ուրիշ ոլորտներ, դառնալ ավելի գրագետ, ավելի կայուն, ավելի ազդեցիկ հասարակություն Արցախում:

- Ուրեմն վերադարձ լինելու է:

- Միանշանակ վերադարձ լինելու է, ես վստահ եմ, որ դա լինելու է 5-10 տարվա ընթացքում: Բայց դա մեզանից չի կախված, այլ աշխարհաքաղաքական վիճակի փոփոխություններից, որն առաջին անգամ կորստերովի այնպես, որ մեզ ձեռնտու կլինի: Պատմության ընթացքում հիմնականում մնան դրսևորումները մեզ շահ չեն բերել, միշտ պայքարել ենք ամբողջ աշխարհի դեմ, բայց այս անգամ կարծում եմ, որ մեր օգտին կլինի: Մնում է ժամանակը գա, եւ մենք գրագետ քայլերով արժանի տերը լինենք մեր սուրբ հողի:

ՈՒԺԵՂ ՈՓԻ

ՄԱՐՏԱՐՎԵՍՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՆԿՐԱԺԵՑ Ե ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ԲԱՆԱԿՈՒՄ

Բանակում տեղի ունեցող ողբերգական դեպքերի՝ զինվորների կողմից դժվարություններին չդիմանալու, ծնունդներին ենթարկվելու, միջանձնային հարաբերություններում միմյանց հանդեպ ոչ համարժեք դրսևորումների, ինքնասպան լինելու բարձր տոկոսայնության համապատկերին մարտարվեստների ուսուցումն առավել քան պահանջված է դարձել: Մեզ ծանոթ մարզիչները միաբերան պնդում են, որ եթե բոլորը նախքան բանակում ծառայելը պարապած լինեն մարտարվեստ, ապա նման դեպքերը բանակում կնվազեն: Չնայած արդի զենքերի ու զինտեխնիկայի դարաշրջանում բանակում ծեռնամարտի կամ մարտարվեստների ուսուցումը հետին պլան է մղվել, այնուամենայնիվ փորձառու մարզիչները, հատկապես նրանք, որոնք ՊԲ-ի կամ հատուկ ստորաբաժանումների շարքերում ծառայելու մեծ փորձ ունեն, առաջնային են համարում մարտարվեստների պարտադիր ուսուցումը դպրոցում, բանակում:

Ցանկացած արեւելյան մարտարվեստ, հատկապես արեւելյան մարտարվեստների ավանդական ձևը, մեծ ուշադրություն է դարձնում մարզիչի հոգեբանության եւ ոգու վրա: Մարտարվեստի առաջնահերթ սկզբունքը հենց բարձր մարտական ոգի սերմանն էլ է յուրաքանչյուր մարզիչի մեջ: Երկրորդ տեղում է տեխնիկան, որին հաջորդում են շարժումների արագությունն ու ուժը: Մարտական հնարքները սովորելով՝ մարզիչի ենթագիտակցությունը փոփոխության է ենթարկվում: Աստիճանաբար հղկելով վարպետությունը՝ մարզիչը հասնում է կոփվածության այնպիսի մակարդակի, որի դեպքում հնարավոր է

վերահսկել հարձակվողին առանց խուճապի մատնվելու: Իսկ վերահսկվող հակառակորդը վտանգավոր չէ: Լուրջ պարապող յուրաքանչյուր անհատ դառնում է ոգով ու ժողովրդով մարդ: Նա ուժեղ ոգով է ընդունում կյանքի մարտահրավերները: Բանակն ու մարտարվեստը նման են նրանով, որ երկուսն էլ նույն առաքելությունն ունեն՝ դաստիարակել ոգով ու ժողովրդով մարդ: Մարտարվեստում կոփված մարզիչը բանակում ավելի հեշտ է հաղթահարում դժվարությունները եւ կատարում մարտական խնդիրը, եւ նրան կոտրելն անհնար է:

Որքան շուտ երեխան սկսի պարապել մարտարվեստ, այնքան ավելի հավանական է, որ նա բարոյապես եւ ֆիզիկապես պատրաստ լինի բանակին: Մարտական արվեստը նպաստում է բացասական էներգիայի դուրս մետմանը, դաստիարակում է ներդաշնակություն մարզիչի մեջ: Հայտնի չեն այնպիսի դեպքեր, երբ մարտարվեստում պրոֆեսիոնալ պարապող զինվորը կոտրվի: Ճիշտ է, ոչ մեկն էլ ապահովագրված չէ բարդ իրադրություններում հայտնվելուց կամ դժվարություններ ունենալուց, բայց կարելի է այն է, թե ինչպես է զինվորը կամ առհասարակ մարդը հաղթահարում դրանք:

Մարտարվեստը եւ սպորտը տարբեր են: Դաժան է հնչում, բայց ժամանակակից սպորտը քաղաքականացված է, բիզնեսի վերածված: Մենամարտային մարզածների եւ իրական մարտարվեստների մեջ մեծ տարբերություն կա: Սպորտում ուշադրություն է դարձվում ռիզգում մրցելու վրա, իսկ մարտարվեստում՝ մարտիկ պատրաստելու: Իզուր չէ, որ ՊԲ զինված ուժերի հա-

տուկ նշանակության ջոկատների գորավարժություններում ընդգրկված են մարտական արվեստի հնարներ: Դպրոցներում ֆիզկուլտուրա առարկան անհրաժեշտ է լրացնել մարտարվեստների պարտադիր դասերով՝ համապատասխան մասնագետների համագործակցությամբ: Այդ դեպքում կունենանք առողջ եւ միաժամանակ մարտական հնարքների տիրապետող, ոգով ու ժողովրդով սերունդ:

Իսկ մարզիչները որքանով են հետաճում մարտարվեստի օգնությամբ սաներից իրական մարտիկ նախապատրաստելու նպատակին: Արցախում գործող մարտարվեստ-

է դարերի փորձով ապացուցված՝ գիտական ու մարտական հսկայական շտեմարան:

Մարտարվեստների աշխարհում վիճաբանում առանձնանում է իր ամենաարդյունավետ մարտական տեխնիկայով: Վերջին տարիներին վիճաբանում ավելի է սկսել զարգանալ ամբողջ աշխարհում: Չինաստանում, օրինակ, այն մտցվել է դպրոցականների պետական կրթական ծրագրի մեջ: Եվրոպայի պետությունների 70 տոկոսի հատուկ նշանակության ջոկատներում պարապմունքները հիմնված են վիճաբանի տեխնիկայի վրա: ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Իսրայելում, այսպես ասած՝ աշ-

որը կոչվում է «Գորշ գայլեր», պատրաստվում է վիճաբանի ուժեղագույն թուրք վարպետի մոտ: ՀՀ-ում եւս ՊԲ հատուկ ջոկատների եւ ոստիկանության գորավարժություններում դասավանդվում է վիճաբանը:

Վիճաբան իր համակարգով տարբերվում է մյուս մարտարվեստներից: Ռազմական փորձագետների որոշմամբ՝ այն ավելի հարմար է զինվորների համար կիրառել մարտական գործողությունների ժամանակ: Վիճաբան աշխատում է թույլ կետերի վրա: Ինչքան էլ պաշտպանիչ հանդերձանքը փակի թույլ տեղերը, խոցելի տեղերը մնում են բաց, վիճաբան աշխատում է հենց խոցելի տեղերի վրա: Վիճաբանը հարմար է կիրառել խրամատներում, որովհետեւ աշխատում է հակառակորդից կարճ հեռավորության վրա: Վիճաբանում նետում գրեթե չկա: Սառը զենքի, կարճ զենքերի, դանակների օգտագործման եւ դրանցից պաշտպանվելու արդյունավետ տեխնիկայով է նաեւ առանձնանում վիճաբանը: Մի խոսքով՝ մարտարվեստների աշխարհում վիճաբանն առանձնանում է իր արդյունավետությամբ ինչպես բանակում, այնպես էլ սովորական կյանքում ինքնապաշտպանության եւ հակահարձակման արդյունավետ գործողություններ կատարելու համար:

Պարապմունքներում ծեռք բերած հմտություններն օգնում են թե ծառայության ժամանակ առաջադրանքներ կատարելիս, թե կյանքի մարտահրավերներին դիմակայելիս: Մարտարվեստում կոփված լինելը նպաստում է կյանքի բոլոր ոլորտներում ինքնադիմապահության, իսկ ծառայողների համար դա ուղղակի անհրաժեշտ է:



ների մի շարք ֆեդերացիաներ ունեցել են հենց այդ նպատակը, իսկ որոշ մարզիչներ նույն գործունեությունը շարունակում են նաեւ Հայաստանում:

Մարտարվեստը հոգեմտավոր մարզումների մեծ դպրոց է, եւ ոչ միայն հեշտությամբ հաղթանակի հասնելու միջոց: Այն պարունակում

խարհի հզորագույն պետությունների ուժային կառույցների եւ անվտանգության համակարգերի պարապմունքները հիմնված են վիճաբանի տեխնիկայի վրա: Մարտարվեստների աշխարհին լավ ծանոթ մարզիչ գիտեն, որ մեր համար մեկ թշնամու՝ թուրքիայի հատուկ նշանակության էլիտար ջոկատը,

Ի հավելումն

ԶԺՀ-ի բնակչությունը հասել է 1 միլիարդ 400 միլիոն մարդու: Բնակչության կեսը տղամարդիկ են, որոնց վաղ մանկությունից նախապատրաստում են պատերազմի: Ամբողջ Չինաստանում գործում են մարտարվեստների շուրջ 300 դպրոցներ, որոնցում գտնվում են համարյա 2 000 000 պատանիներ:

Հինգ տարեկանից նրանց սովորեցնում են սպանել: Այդ դպրոցներից շատերը լեգենդար Շաոլին վանքի մերձակայքում գտնվող Դենֆեն քաղաքում են: Վանքը հայտնի է իր մարտական վանականներով: Շաոլինյան վանքի մերձակայքում կենտրոնացած են անհավատալի քանակով դպրոցներ, որոնցից յուրաքանչյուրում մարզվում են 5-ից 18 տարեկան 5000-ից 10 000 երեխաներ: Տղաներին այստեղ դաստիարակում են ինչպես տերմինատորներ: Դպրոցները ոնց որ փակ ինտերնատներ լինեն, որոնք ավելի շատ նման են զինվորական գորանոցների: Ծնողների մոտ նրանք թողնում են արձակուրդ գնալ ընդամենը տարին մեկ անգամ: Մնացած ժամանակը նրանք ծախսում են հյուժիչ մարզումների վրա, որոնք մարդկային հնարավորություններից վեր են թվում:

Ապագա հատուկզորակառույցների օրն սկսվում է առավոտյան ժամը 5-ին մի քանի ժամ կրոս վազելով: Օրվա մեջ նրանք վա-

ԵՐԿՆԱՏԱԿԻ ԲԱՆԱԿԻ ՀՆՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎՏԱՆԳԸ

զում են տասնյակ կիլոմետրերով: Նրանք տուրկունությամբ չեն զիջում օլիմպիական մարզիկներին: Դիմադրողականությունն ու ձգունությունը երեխաները մարզում են դժվարագույն զինմաստիկ կեցվածքների միջոցով: Վագրային ճարավությունը մարզում են պտտեցնելով սալտո՝ իրենց վարպետությամբ չզիջելով անգամ փորձառու ակրոբատներին: Որպեսզի մարմինը ամուր լինի, ինչպես պողպատը, երեխաները հազարավոր հարվածներ են իրար հասցնում: Իսկ ծեռնամարտի հնարները պարապում են հատկապես դա-



ժան ձևով: Կանաչ ոլոռի հատիկներով լցրած պարկերը նրանք պետք է ծեռքերով փոշիացնեն: Այդպես երեխաները մարզում են ծեռքերը, որ դրանք ամուր լինեն: Տարիքի հետ ոլոռը կփոխարինվի երկաթյա սղոցաքանդակով: Իսկ հարվածների մարզման համար որպես տանձիկներ հանդիսանում են փայտյա սյուները, որոնց պետք է հարվածեն մերկ ծեռքերով: Որպեսզի ծեռքերում ավելի շատ ուժ լինի՝ գանտեյլների փոխարեն երեխաները բարձրացնում են ցեմենտ մարզաքարեր, յուրաքանչյուրը՝ 7,5 կգ քաշով: Այդ երեխաներից յուրաքանչյուրը հեշտությամբ կարող է հասուն մարդու զանգ ձեղքել կամ կոտրել նրա կողաճաղերը:

Ավագ խումբն ուսումնասիրում է սրով մարտ: Սուրը կշռում է 4կգ: Հնուն այդպիսի սրեր օգտագործել են իրական ճակատամարտերի ժամանակ: Աշակերտները պետք է յուրացնեն սրի բոլոր 72 մարտական ոճերը:

Քունգֆուի մեջ հոգեբանական ճիշտ վիճակը օգնում է հաղթել մարտը մինչ նրա մեկնարկը: Այդ նպատակով

դպրոցում սովորեցնում են վախեցնել հակառակորդին մարտական դիմաձուլությամբ: Երբ տեսնում են դիմացիդ այդպիսի դեմքով տղա, իսկույն հասկանում են, որ ավելի լավ է հետը գործ չունենալ:

Կենտրոնացումը չինացի ապագա զինվորների, այսպես կոչված, «սուպերուժն» է: Այդ հմտությունը յուրացնում են ժամերով մեղիտացիաներ կատարելու միջոցով:

1980-ականներին այդպիսի դպրոցները շատ քիչ էին, բայց Չինաստանի իշխանությունը սկսեց վերականգնել հին ավանդույթները: Դրա շնորհիվ Չինաստանում հատուկ ջոկատայիններին պատրաստում են հենց վաղ մանկությունից: 20 տարեկանում նրանք դառնում են մեքենաներ սպանության համար, եւ լրացնում են ԿԺՀ-ի բանակի շարքերը: Արեւելյան մարտարվեստներ պարապողների թիվը շուրջ հարյուր միլիոն է: Պատկերացնում եք՝ հարյուր միլիոն կոփված հատուկ ջոկատայիններ: Ոչ պաշտոնական տվյալներով նրանք թիվը կրկնապատկվելու միտում ունի շուրջ հինգ տարվա մեջ: Դա նշանակում է՝ կասկած չի լինի, որ Չինաստանը ոչ միայն ամենամեծ թվաքանակով բանակ ունեցող երկիրն է, այլեւ՝ ամենահզորը:

ԳՐԱԿԱՆ

ԹԱՐԳԱՆՈՒՄ Ե ԱՐՑԱՆՑԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ



Սամվել Թավադյանը ծնվել է 1994թ. հունիսի 18-ին Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Հացի գյուղում:

2010թ. ընդունվել է ԱրՊՀ պատմա-իրավագիտական ֆակուլտետի «Պատմություն» բաժինը:

2018- 2023թթ. աշխատել է Շուշիի շրջանի Մեծ շեն համայնքի «Ս. Դավթյանի անվան միջնակարգ դպրոց»-ում՝ որպես պատմության ուսուցիչ:

2022-2024թթ. համագործակցել է «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի հետ:

Թարգմանել է Արսենի Տարկովսկու, Իոսիֆ Բրոդսկու, Խորխե Լուիս Բորխեսի, Պոլ Էլյուարի և այլ հեղինակների ստեղծագործություններից:

«Ակտուալ Արվեստ» հրատարակչությունը պատրաստվում է հրատարակել Խորխե Լուիս Բորխեսի բանաստեղծությունների ժողովածուն՝ Սամվել Թավադյանի և Հասմիկ Ամիրխանյանի թարգմանությամբ: Ստորև ներկայացնում ենք հեղինակի ստեղծագործությունները Սամվել ԹԱՎԱԴՅԱՆԻ թարգմանությամբ:

Ժամանակը հիշում է սրերը և նավերը, և կայսրությունների փոշին, և հնչեցնում է հեկադամետրի, և ահեղ մարտական ձիերը, և աղաղակները և տողերը Եբսափիրի:

Իսկ ես ուզում եմ հիշել այն համբույրը, որ նվիրել ես ինձ Իսլանդիայում:

Գետերը

Մենք ժամանակն ենք, գաղտնի իմաստը Մթին Հերակլիտեսի հայտնի խոսքի: Մենք ջուրն ենք, ոչ կարծր ավազան, Ոչ թե մնայունը, այլ կորուստը հոսքի: Մենք գետն ենք և այն հույնը, որ տեսնում է իր պատկերը գետում: Նրա արտացոլանքը այլակերպվում է ջրի հարափոխ հայելում և բյուրեղում, որ երբեք է, ինչպես կրակը:

Մենք նախորշած գետն ենք, որ հոսում է առ ծով՝ գետը ունայն՝ պատված ստվերներով: Ամեն ինչ հրաժեշտ է տվել, հեռանում է: Հիշողությունը այլևս մետաղադրամներ չի հատում:

Եվ սակայն ինչ-որ բան մնում է: Եվ սակայն ինչ-որ բան մորմոքում է:

Inferno, V, 129

Նրանք նետում են գիրքը, բանգի գիտեն, որ իրենք - գրքի կերպարներն են: (Ինչպես լինելու են մի ուրիշ՝ հանճարեղ գրքի,

նրանց համար անիմանալի): Այժմ նրանք Պաոլոն և Ֆրանչեսկան են, Ոչ թե երկու ընկեր, Որ կիսում են համը վեպի: Անիրական հիացումը է նրանց հայացքներում:

Չեռքերը չեն հպվում: Նրանք հայտնաբերել են միակ գանձը: Նրանք գտել են միմյանց: Եվ չեն դավաճանել Մալատեստային, Չի դավաճանության համար անհրաժեշտ է երրորդը, Իսկ աշխարհում միայն երկուսն են՝ Պաոլոն և Ֆրանչեսկան, ինչպես նաև Գվինևրան

Եվ նրա սիրեցյալը և բոլոր սիրահարները, Որ պարել են այն ժամանակներից, Երբ Ադամն ու Եվան կիսել են Դրախտի այգին,

Բայց միայն երազը և գիրքը բացահայտեցին, Որ նրանք մասն են այն երազի, Որ երազվել է հողում բրետանական: Եվս մի գիրք և մարդկանց երազներում թափառելու են Պաոլոն և Ֆրանչեսկան:

Բայց միայն երազը և գիրքը բացահայտեցին, Որ նրանք մասն են այն երազի, Որ երազվել է հողում բրետանական: Եվս մի գիրք և մարդկանց երազներում թափառելու են Պաոլոն և Ֆրանչեսկան:

Երաժշտական գգրոց

Ճապոնական երաժշտություն: Կլեպսիդայից դանդաղ ծորում են Կաթիլները մեղրի և անտեսանելի ոսկու... Եվ ժամանակի հոսքում Կրկնում են պատմությունը նույն՝ Հարատև և փխրուն, խորհրդավոր և ակներև:

Մարսափում են, որ ամեն կաթիլ կարող է վերջինը լինել: Նրանք - երեկվա օրն են վերադարձնում: Ո՞ր տաճարն է: Լեռան վրա ո՞ր այգին: Ո՞ւմ արթնությունն է անհայտ ծովափին, Ո՞ր անեղծ մելամաղձության, Մոռացված և փրկված օրերն են Հոսում առ իրենց ապագան: Ես չգիտեմ: Այլևս կարևոր չէ: Ես երաժշտության մեջ եմ և արնահոսում եմ:

Մարսափում են, որ ամեն կաթիլ կարող է վերջինը լինել: Նրանք - երեկվա օրն են վերադարձնում: Ո՞ր տաճարն է: Լեռան վրա ո՞ր այգին: Ո՞ւմ արթնությունն է անհայտ ծովափին, Ո՞ր անեղծ մելամաղձության, Մոռացված և փրկված օրերն են Հոսում առ իրենց ապագան: Ես չգիտեմ: Այլևս կարևոր չէ: Ես երաժշտության մեջ եմ և արնահոսում եմ:

Կախարդան թելը

Այդ թելը Արիադանն իր ձեռքերը դրեց Թեսևսի ձեռքը (մյուս ձեռքում սուրն էր), որպեսզի նա մտներ լաբիրինթոսը, գտներ նրա կենտրոնը, ցլի գլխով մարդուն, կամ ինչպես Դանթեին է պատկերացել՝ մարդու գլխով ցլին սպաներ նրան, իսկ սխրանքից հետո արծակեր քարե կապանքները և վերդառնար սիրելիի մոտ:

Այդպես էլ եղավ: Թեսևսը անկարող էր իմանալ, որ լաբիրինթոսից այն կողմ՝ ժամանակի լաբիրինթոսն է, որտեղ նրան սպասում է Մեդեան:

Այնուհետև թելը անհետացավ, լաբիրինթոսն էլ: Եվ հիմա ոչ ոք չգիտի, թե ինչ է մեր շուրջը - լաբիրինթոս, խորհրդավոր տիեզերք, թե կործանարար քաոս:

Մեր ճակատագիրն է երևակայել, կարծես թե թելը և լաբիրինթոսը գոյություն ունեն: Մենք երբեք թել չենք պահել մեր ձեռքերում: Գուցե, մենք գտնում ենք այն և կորցնում հայտնության պահին, երաժշտական հնչյուններում, երազում, բառերում, որ անվանում ենք փիլիսոփայություն կամ էլ պարզ, անկեղծ երջանկության մեջ:

Հատվածներ կապե սալիկից՝ վերծանված էրմոնո Բիշոպի կողմից 1867թ.

Ժամանակն առանց ստվերի: Օրվա բարձունքից Մեկկարթ աստվածը տիրում է Կարթագենյան ծովին: Հանիբալը՝ Մեկկարթի սուրն է:

Երեք արկղ ոսկե մատանիներ՝ զարդերը Ապոլիոն ընկած վեց հազար հռոմեացիների՝ հասան նավակայան:

Երբ խաղողի ողկույզը աշնանանա, ես կթելադրեմ վերջին բանաստեղծությունը:

Փառք Բահադին, որ երկինքների աստվածն է, փառք Թինիթին, որ Բահադի հայացքն է: Նրանք հաղթանակ շնորհեցին Կարթագենին և Նավիթեցին նախնիների ժառանգությունը՝ անսպառ պուրակային լեզուն, որին վիճակված է լինել աշխարհի լեզուն և որի խորհրդանիշները թախանձաներ են:

Ես չեմ գոհվել պատերազմում, ինչպես իմ որդիները, որ առաջնորդում էին ճակատամարտը: Ինձ տրված չէր նրանց հողին հանձնել, բայց երկար գիշերներ ես երգեի եմ դարբենի երկու պատերազմների և ցնծության մասին:

Ծովն այժմ մերն է: Ի՞նչ գիտեն հռոմեացիները ծովի մասին: Հռոմի մարմարները դողում են, նրանք լսել են մեր մարտական փղերի երթը:

Խախտված պայմանագրերից և սուտ խոսքերից հետո մենք անցել ենք սրի լեզվին:

Հռոմեացի, հիմա քոնն է սուրը և այն քո կրծքում է:

Ես երգել եմ քաղաքամայր Տյուրոսի ծիրանին: Ես երգել եմ նրանց գործերը, ովքեր հայտնագործել են այբուբենը և նավարկել ծովերում: Ես երգել եմ թագուհու խարույկը:

Ես երգել եմ թիակները, կայները և մոլեզին փոթորիկները...

Անճանորը

Սուրը տաճարում է: Ես մեկն եմ տաճարի քրմերից, որ այն երբեք չի տեսել:

Այլ համայնքներ երկրպագում են բրոնզե հայելիներ

կամ քարեր: Մտածում եմ՝ վաղեմի ժամանակներում ընտրում էին հազվագյուտ իրեր:

Անկեղծորեն ասում եմ. սինտոիզմը ամենաազատ պաշտամունքն է:

Ամենաազատը և ամենահինը: Մենք ունենք ինչ գրություններ, որ այլևս անընթեռելի են:

Սինտոիզմ դավանել կարող են եղջերուները և ցողի կաթիլները:

Այն բարերարություն է ուսուցանում, բայց չի սահմանում բարոյականություն:

Եվ չի պնդում, որ յուրաքանչյուրը հյուսում է իր կարման:

Այն չի սարսափեցնում հատուցմամբ և կաշառում ընծաներով:

Նրա հետևորդները կարող են աշակերտել Բուդդային կամ Հիսուսին:

Այն պատվում է կայսիրն և մեռյալներին: Հավատում է, որ մահից հետո մարդը աստվածանում է

և պահպանում իր ժողովրդին: Հավատում է, որ մահից հետո ծառը աստվածանում է

և պահպանում ծառերին: Հավատում է, որ աղը, ջուրը և երաժշտությունը մաքրագործում են:

Հավատում է, որ աստվածությունները անթվելի են:

Արշալույսին մեզ այցելեց մի ծեր բանաստեղծ՝

կույր պերուացի: Սրահում նստած մենք կիսում էինք այգու քամին,

խոնավ հողի բույրը և երգը թևավոր աստվածների:

Թարգմանչի միջոցով ես մեկնել եմ մեր հավատը:

Զգիտեմ, թե նա ինչ է հասկացել Արևմտյան դեմքերը՝ դիմակներ են, Որ անհնար է վերծանել:

Նա խոստացել է Պերու վերադառնալով՝ հիշել մեր գրույցը բանաստեղծությամբ:

Զգիտեմ, թե ինչ է եղել: Զգիտեմ՝ կիսանդամն է նրան:

ԱՐՑԱՆՑԱՆ ՀԱՄՈՎ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ. ՎԱՐՊԵՏԱՅ ԴԱՍ

Երևանի Բաղրամյան 6 հասցեում Արցախի անկախության օրը արցախյան համն ու հոտն էր տարածվել, որ երկինք էր հասնում: «Ասկերանցիներ» համայնքի զարգացման կենտրոնը ՀԿ-ի նախաձեռնությամբ (ծրագրի ղեկավար՝ Ալլա Արզումանյան) արցախյան ժենգալով հացի պատրաստման վարպետաց դաս էր կազմակերպել, որին մասնակցելու համար

հրավիրված էին և՛ արցախցի, և՛ ՀՀ քաղաքացիներ. մուտքն ազատ էր: Ասկերանի կանանց զարգացման կենտրոնն իր աշխատանքը սկսել էր դեռևս 2017-2018թթ.-ից: Այդ կանայք դասընթացների միջոցով ծանոթացել են փոքր բիզնեսի կանոններին, որոշակի սարքավորումներ ձեռք բերել և գործունեություն ծավալել տարբեր բնագավառներում:



2023-ի սեպտեմբերի 19-ից հետո բռնի տեղահանված արցախցի այդ կանայք չեն կորցրել իրենց և փորձել են աշխատանքով խեղդել իրենց ցավն ու կարողը: «Ասկերանցիներ» համայնքի զարգացման կենտրոնը սկսել է գործել 2023-ի դեկտեմբերից. ծրագիրը կոչվում է «Վերածնունդ»:

Ս. ԳԱԶԱՐՅԱՆ

ՀՈՒՍԱՐԱՐ Հիմնադիր՝ Ս. ԽԱԶԱՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ Էլ. փոստ, ք. Երևան, Անտառային փ. 188/16 097-22-38-27 E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է «Լիմոն» ՄՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500 Ստորագրված է տպագրության՝ 04.09.2024թ.: